



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 13 (470) «16» մայիսի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ		
237	««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-12-Ն օրենքը.....	4
238	««Հայաստանի Հանրապետության 2004 թվականի աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-13-Ն օրենքը.....	5
239	««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-14-Ն օրենքը.....	7
240	««Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-15-Ն օրենքը.....	10
241	««Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-16-Ն օրենքը.....	12
242	««Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-17-Ն օրենքը.....	14
243	««Հարկադիր կատարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-18-Ն օրենքը.....	15
244	««Ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-19-Ն օրենքը.....	16
245	««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-20-Ն օրենքը.....	17
246	««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-21-Ն օրենքը.....	18
ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
247	«Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի օգոստոսի 12-ի ՆՀ-2754-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-806-Ն հրամանագիրը.....	19
248	«Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի մարտի 26-ի ՆՀ-584-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-808-Ն հրամանագիրը.....	20
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ		
249	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԿ-9-Ն կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ Նախագահի ՆԿ-6-Ն կարգադրությունը.....	21
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
250	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 26 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 489-Ն որոշումը.....	22
251	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 25-ի N 187-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 491-Ն որոշումը.....	23
252	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 503-Ն որոշումը.....	25
253	«Պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված ընտանիքների համար Հայաստանի Հանրապետությունում բնակարանային մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 505-Ն որոշումը.....	26
254	«Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգի աշխատողի օրը նշելու մասին» ԱՀ կառավարության N 511-Ն որոշումը.....	27
255	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 94 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 512-Ն որոշումը.....	38
256	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 509-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 516-Ն որոշումը.....	39
257	«Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Մննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու և մի շարք պետական կառավարչական հիմնարկներ վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 517-Ն որոշումը.....	41
258	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի N 217 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 520-Ն որոշումը.....	43
259	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 104 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 521-Ն որոշումը.....	58

260	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 10-ի N 884-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 524-Ն որոշումը.....	59
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
261	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 13-Ն որոշումը.....	60
262	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 14-Ն որոշումը.....	62
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
263	««ԼԻԼՄԵԴ ՑԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 84-Ա հրամանը.....	63
264	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրների տրամադրման մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-93-Ա հրամանը.....	64
ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒԹՆ ԴՄՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃՈՒԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
265	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/1469/02/21 որոշումը.....	65

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-90-Ն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասում «69 620 ՀՀ դրամից, ապա մայրության նպաստը հաշվարկելիս որպես միջին ամսական աշխատավարձ հիմք է ընդունվում 69 620 ՀՀ դրամը» բառերը փոխարինել «նվազագույն ամսական աշխատավարձից, ապա մայրության նպաստը հաշվարկվում է նվազագույն ամսական աշխատավարձի չափով» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: 2022 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքերում վարձու աշխատողների կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձանց մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարված մայրության նպաստների չափերը ենթակա են վերահաշվարկման:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-12-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» 2005 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-186 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-11-րդ հոդվածներով.

«Հոդված 9. Մինչև սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում աշխատանքային գրքույկներն Արցախի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին ներկայացնելը գործատուն պարտավոր է՝

1) աշխատանքային պայմանագիր կնքելու համար աշխատանքի ընդունվողներից պահանջել աշխատանքային գրքույկ՝ բացառությամբ առաջին անգամ կամ համատեղությամբ աշխատանքի ընդունվողների.

2) հիմնական աշխատավայրում աշխատող բոլոր աշխատողների համար վարել աշխատանքային գրքույկ.

3) վերջնահաշվարկի օրը սահմանված կարգով լրացնել աշխատողի աշխատանքային գրքույկն ու հանձնել նրան:

Աշխատանքային գրքույկում լրացվում են՝

1) աշխատողի անունը, ազգանունը (նրա ցանկությամբ՝ հայրանունը).

2) աշխատողի ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

3) աշխատանքային պայմանագրի համաձայն՝ աշխատելու ժամանակահատվածը.

4) գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը (լրացնում է լիազոր մարմինը).

5) պետական այն ծառայությունների կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածը, որը, նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, հաշվարկվում է աշխատանքային ստաժում (լրացնում է լիազոր մարմինը).

6) միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսման ժամանակահատվածը (լրացնում է այն գործատուն, որի մոտ անձն անցել է աշխատանքի ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո).

7) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը (լրացնում է այն գործատուն, որի մոտ անձն անցել է աշխատանքի գորացրվելուց հետո).

8) գրառման հիմքը՝ իրավական ակտի համարը, ընդունման օրը, ամիսը, տարին:

Հատուկ ամրագրվում է նաև այն աշխատանքների կատարման ժամանակահատվածը, որոնք, օրենսդրությանը համապատասխան, հնարավորություն են ընձեռում աշխատողին արտոնյալ պայմաններով անցնելու կենսաթոշակի:

Աշխատողի պահանջով աշխատանքային գրքույկում լրացվում են՝

- 1) աշխատանքային պայմանագրի լուծման հիմքը.
- 2) զբաղեցրած պաշտոնի կամ կատարած աշխատանքի մասին տեղեկությունները.
- 3) համատեղության կարգով աշխատելու ժամանակահատվածը, եթե աշխատողը համատեղությամբ աշխատանքը հաստատող փաստաթուղթ է ներկայացնում հիմնական աշխատավայրի գործատուին:
Աշխատանքային գրքույկում սույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ չեն գրառվում:
Աշխատանքային գրքույկի ձևը, վարելու կարգը, ինչպես նաև աշխատանքային գրքույկի կրկնօրինակ տրամադրելու կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 10. Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում հիմնական աշխատավայրի գործատուն Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին է ներկայացնում իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները՝ դրանցում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով, որից հետո դրանք հանձնում է աշխատողներին:

Հոդված 11. «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում՝ լիազոր մարմնի կողմից ստեղծված հանձնաժողովների կողմից սահմանված աշխատանքային ստաժը հիմք է աշխատանքի ընդունման համար պահանջվող աշխատանքային ստաժը հաշվարկելու համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ աշխատանքային գրքույկ պահանջելու և վարելու մասին դրույթների գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-13-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-206 օրենքում (այսուհետ՝ Օրենք)՝

1) Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասից «քաղաքացիական» բառից առաջ, 3.1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 8-րդ մասերից, 18-րդ հոդվածի 3-րդ մասի չորրորդ պարբերությունից «օրենքով» բառից առաջ, 3.1-ին հոդվածի 7-րդ մասից, 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետից, 9.7-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունից, 18-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությունից «օրենքի» բառից առաջ և 7-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետից «օրենքին» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի «**դրոշմապիտակ**» հասկացությունից հանել «ապրանքի համառոտ անվանումը,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 9.1-ին հոդվածում՝

1) 2.1-ին մասում «կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «անձինք» բառով և դրա համապատասխան հոլովածնով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-2.6-րդ մասեր.

«2.2. Սույն օրենքի իմաստով՝ Արցախի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող են համարվում նաև դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքներն այլ կերպ տարայավորող (փաթեթավորող, շշալցնող) անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2.3-րդ մասով նախատեսված դեպքերի:

2.3. Մանրածախ առևտրի ոլորտում դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքներ օտարող անձինք դրոշմավորման պարտավորություն չեն կրում, եթե այդ ապրանքների նոր տարայով տարայավորումը (փաթեթավորումը, շշալցումը) կատարվում է օտարման պահին, կամ այդ ապրանքների փաթեթավորումն իրականացվում է կշռող սարքի օգտագործմամբ իրականացվող առևտրային գործարքների ժամանակ:

2.4. Կազմակերպությունների (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է պատվիրատուն:

2.5. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է այդ ապրանքներն

արտադրողը կամ շշալցնողը կամ այլ կերպ տարայավորողը (փաթեթավորողը):

2.6. Որպես գրավի առարկա գրավառուին հանձնված դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների՝ մինչև սեփականության իրավունքի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելը դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավատուն: Գրավի առարկա հանդիսացող՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների սեփականության իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավատուն:»:

Հոդված 4. Օրենքի 9.2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ մասերով» բառերով.

2) 3-րդ մասում «0405,» թվից հետո լրացնել «0406,» թիվը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. ԱՏԳ ԱԱ 3303, 3304, 3305 և 3401 ծածկագրերին դասվող՝ մինչև 2 գրամ զտաքաշ կամ 2 միլիլիտր ծավալ ունեցող ապրանքները (այդ թվում՝ փորձանմուշները) ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:»:

Հոդված 5. Օրենքի 9.4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.
«Սույն մասի կիրառման առումով դրոշմավորումը կատարվում է Արցախի Հանրապետության տարածքում արտադրված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված) դրոշմավորման ենթակա ապրանքի միավորի վրա, բացառությամբ սույն հոդվածի 1.3-րդ մասով սահմանված դեպքի:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-1.3-րդ մասեր.

«1.1. Եթե դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից օտարվում են նույն փաթեթում կամ ցանկացած այլ ձևի տարայում գտնվող դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա և ոչ ենթակա ապրանքներ, ապա դրանց դրոշմավորումն իրականացվում է միայն դրոշմավորման ենթակա ապրանքի մասով՝ սույն հոդվածի և սույն օրենքի 9.3-րդ հոդվածի համաձայն:

1.2. Եթե դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից օտարվում են նույն փաթեթում կամ ցանկացած այլ ձևի տարայում գտնվող դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա մեկից ավելի ապրանքներ, ապա դրանց դրոշմավորումն իրականացվում է յուրաքանչյուր դրոշմավորման ենթակա ապրանքի մասով առանձին՝ սույն հոդվածի և սույն օրենքի 9.3-րդ հոդվածի համաձայն, բացառությամբ սույն հոդվածի 1.3-րդ մասով սահմանված դեպքի:

1.3. ԱՏԳ ԱԱ 0207 և 0210 ծածկագրերին դասվող՝ ընտանի թռչունների պաղեցված կամ սառեցված մսի դրոշմավորումը կարող է իրականացվել յուրաքանչյուր արկղի համար:»:

Հոդված 6. Օրենքի 9.5-րդ հոդվածի 1-ին և 9.6-րդ հոդվածի 1-ին մասերից հանել «վերադաս» բառը:

Հոդված 7. Օրենքի 9.7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային մարմին մինչև դրանց ստացման ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին օրը ներառյալ:»:

2) 3-րդ, 4-րդ մասերում և 6-րդ մասի առաջին պարբերությունում «վնասված դրոշմապիտակներ» բառերի հոլովաձևերից հետո լրացնել «(բացառությամբ դրոշմավորման ընթացքում խոտանված դրոշմապիտակների)» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Սույն օրենքի իմաստով խոտանված են համարվում դրոշմավորման ընթացքում վնասված դրոշմապիտակները, որոնց քանակը չի գերազանցում սույն օրենքի 9.3-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ներկայացված վերջին հաշվետվությունում նշված՝ օգտագործված դրոշմապիտակների քանակի 0,5 տոկոսը:»:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «եթե» բառից հետո լրացնել «դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում նշված դրոշմավորման ենթակա ապրանքի ընդհանուր արժեքը և (կամ)» բառերը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-14-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» 2015 թվականի հոկտեմբերի 29-ի ՀՕ-46-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 1) 4-րդ կետից հանել «ֆինանսատնտեսական գործունեության» բառերը.
- 2) 6-րդ կետում «փաթեթը» բառից հետո լրացնել «և լրացման ցուցումները» բառերը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2. Լիազոր մարմինն իր իրավասության սահմաններում հաստատում է՝
 - 1) Արցախի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը.
 - 2) կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը.
 - 3) կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը.
 - 4) կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը և լրացման ցուցումները.
 - 5) կազմակերպություններում հողամասերի և շենքերի վերագնահատման անցկացման ժամկետները և մեթոդաբանությունը.
 - 6) կազմակերպություններում նյութական ակտիվը որպես հիմնական միջոց դասակարգելու նվազագույն արժեքը.
 - 7) կազմակերպություններում նոր հիմնական միջոցների և սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները.
 - 8) կազմակերպությունների դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման, դուրսգրման և հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման կարգը.
 - 9) սույն օրենքով նախատեսված իրավական այլ ակտեր:».
- 2) 3-րդ մասի 3-րդ կետից հանել « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» բառերը.
- 3) 3-րդ մասի 4-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.
«5) կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ մշտադիտարկումը և անհրաժեշտ մեթոդական ցուցումների տրամադրումը, ինչի նպատակով իրավասու է կազմակերպություններից պահանջելու տրամադրել նրանց սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների հաշվապահական հաշվառման գրանցամատյանները (հաշվապահական հաշվառման գործառնությունների մատյանները), դրանց շրջանառության տեղեկագրերը և ֆինանսական հաշվետվությունները:».

4) 4-րդ մասից հանել «ֆինանսատնտեսական գործունեության» բառերը, իսկ «օրինակելի փաթեթը և» բառերը փոխարինել «օրինակելի փաթեթը և լրացման ցուցումները, ինչպես նաև» բառերով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը» բառերը փոխարինել «հաշվապահական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատիրոջ կամ կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ անհատ ձեռնարկատերը կամ կազմակերպության լիազորած անձը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում «սկզբնական հաշվառման փաստաթղթերի» բառերը փոխարինել «սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր)» բառերով:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Համայնքի՝ որպես մեկ միասնական միավորի ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է համայնքի ղեկավարի աշխատակազմը»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վերահսկող կազմակերպությունը սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված առաջին համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստում է 2023 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար»:

2) 3-րդ մասում «2020» թիվը փոխարինել «2024» թվով:

Հոդված 7. Օրենքի ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի գործողությունը տարածվում է 2017 թվականի դեկտեմբերի 31-ից ծագած հարաբերությունների վրա.

2) 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2019 թվականի դեկտեմբերի 31-ից ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-15-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-83-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից» բառերը փոխարինել «Քաղաքացիական օրենսգրքից» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագրի կնքելուց,

դ. օրենքով նախատեսված կարգով նրա առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասում «տասնապատիկը» բառը փոխարինել «քսանապատիկը» բառով:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«2) գնային առաջարկը.»:

Հոդված 5. Օրենքի 31-րդ հոդվածի՝
1) 2-րդ մասում
ա. 2-րդ կետի «հրավերի մեջ» բառերը փոխարինել «հրավերի մեջ, կամ» բառերով,
բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ՝
«3) տեղական արտադրող համարվող մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Տեղական արտադրողի հիմնական չափորոշիչները և նախապատվություն տալու պայմանները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության կողմից.»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3. Հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների համեմատումն իրականացվում է՝ ներառյալ Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք անուղղակի հարկերի գումարների հաշվարկը.»:

Հոդված 6. Օրենքի ամբողջ տեքստում, բացառությամբ Օրենքի 51-րդ հոդվածի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-16-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

**«ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» 2018 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-81-Ն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետ.

«6.1) ռազմական դրության իրավական ռեժիմին համապատասխանող կատարողական վարույթի առանձնահատկությունների սահմանում.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-17-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

**«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկադիր կատարման մասին» 1999 թվականի մարտի 24-ի ՀՕ-66 օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 42.1-ին հոդված.

«Հոդված 42.1. Կատարողական վարույթի առանձնահատկությունները ռազմական դրության պայմաններում

Ռազմական դրության պայմաններում կատարողական վարույթի հետ կապված գործողություններն իրականացվում են Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված առանձնահատկությունների շրջանակներում և ծավալով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-18-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2003 թվականի նոյեմբերի 26-ի Ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 12-րդ հոդվածի 14-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ կետ.

«15) ջրամատակարարման և ջրահեռացման կազմակերպման, ջրային համակարգերի կառավարման, դրանց անվտանգության ապահովման և պահպանության ոլորտում ներդնում է ջրային համակարգերի կառավարման մարմին ներկայացվող համապատասխան հաշվետվություններ (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն), սահմանում է դրանց ձևերը և հավաքված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարում ռեզիստրներ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասում «2022» թիվը փոխարինել «2027» թվով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ 2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 31-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-19-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-199 օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1) պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ռազմական ամբիոնների ստեղծումը, վերակազմակերպումը, լուծարումը և կանոնադրությունների հաստատումը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-20-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
ապրիլի 28-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2002 թվականի հոկտեմբերի 30-ի ՀՕ-10 օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետում «իրավասությունը» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՀՕ-21-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ՆՀ-2754-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի օգոստոսի 12-ի «Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրականացվող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-2754-Ն հրամանագրի 2-րդ կետում «և Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերը փոխարինել «, Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի, Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի» բառերով:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 4
Ստեփանակերտ
ՆՀ-806-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 26-Ի ՆՀ-584-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի մարտի 26-ի «Արցախի Հանրապետության տարածքում հայտարարված ռազմական դրության պայմաններում իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների մասին» ՆՀ-584-Ն հրամանագրի 4-րդ կետի «Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ 2022 թվականի ապրիլի 23-ին և 24-ին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի կապակցությամբ» բառերով:

2. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 4
Ստեփանակերտ
ՆՀ-808-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԿ-9-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը **ո ր ո շ ու մ եմ**.

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-9-Ն կարգադրությունը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. մայիսի 12
Ստեփանակերտ
ՆԿ-6-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 մայիսի 2022թ.

N 489-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ք ն շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» N 26 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկերի մասին» օրենքի» բառերով.

2) որոշմամբ սահմանված հավելվածում՝

ա. 1-ին, 9-13-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե» բառերի համապատասխան հոլովաձևերով,

բ. 2-րդ և 11-րդ կետերում «500.0 հազ. դրամը» բառերը փոխարինել «1 000 000 ՀՀ դրամը» բառերով,

գ. 2-րդ կետի «գ» ենթակետում «գրանցման» բառից հետո լրացնել «կամ պետական հաշվառումից հանման» բառերը,

դ. 3-5-րդ և 14-16-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի» բառերով,

ե. 3-րդ, 8-րդ, 10-րդ, 13-15-րդ կետերում «դատական ակտերի հարկադիր կատարման» բառերը փոխարինել «հարկադիր կատարումն ապահովող» բառերով,

զ. 12-րդ կետում «ստացած» բառից հետո լրացնել «կամ պետական հաշվառումից հանված» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 մայիսի 2022թ.

N 491-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 187-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 25-ի «Հավատարմագրման ազգային մարմին ստեղծելու, Արցախի Հանրապետության հավատարմագրման լիազորված մարմին ճանաչելու, հավատարմագրման ազգային մարմնի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 700 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 187-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում «օրենքի» բառից առաջ «Արցախի Հանրապետության» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել:

2) որոշման 2-րդ կետում «Էկոնոմիկայի և գյուղատնտեսության» բառերը փոխարինել «Ֆինանսների և էկոնոմիկայի» բառերով:

3) որոշման 3-րդ կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4) որոշման 4-րդ կետով հաստատված N 2 հավելվածի 1-ին կետում «օրենքի» բառից առաջ «Արցախի Հանրապետության» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մայիսի 3-ի N 491-Ն որոշման

«Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի մարտի 25-ի N 187-Ն որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ (ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ)

Վահրամ Բաղդասարյան	Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահ)
Անդրանիկ Գասպարյան	Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վիլեն Ավետիսյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Օֆելյա Գրիգորյան	«Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Սերգեյ Բաբայան	«Տեխնիկական անվտանգության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Սերգեյ Հարությունյան	«Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության «Արցախ» մասնաճյուղի տնօրեն
Աիդա Թորոսյան	«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
Անյուտա Սարգսյան	«Արցախի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն
Քրիստինա Սարգսյան	Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքների և սակագների բաժնի պետ (խորհրդի քարտուղար)»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2022թ.

N 503-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 463 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1973 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2022թ.

N 505-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ
(ՄԱՀԱՑԱԾ) ԿԱՄ ԱՆՀԱՅՑ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 2-րդ, 105-րդ հոդվածի 3-րդ մասերով և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է.**

1. Հաստատել պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված ընտանիքների համար Հայաստանի Հանրապետությունում բնակարանային մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված ընտանիքների համար Հայաստանի Հանրապետությունում բնակարանային մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցության տրամադրման շրջանակներում Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի և առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված ընտանիքների համար Հայաստանի Հանրապետությունում բնակարանային մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցություն տրամադրելու լիազորությունները վերապահել Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՋՈՆՎԱԾ
(ՄԱՀԱՑԱԾ) ԿԱՍ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՆԱԿԱՎՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված ընտանիքների համար Հայաստանի Հանրապետությունում բնակարանային մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցության տրամադրման կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում բնակարան կամ բնակելի տուն (այսուհետ՝ երկուսը միասին՝ բնակտարածք) ձեռք բերելու նպատակով առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից շահառուներին տրամադրվող հիփոթեքային վարկերի կանխավճարների, ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված պետական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Կարգում կիրառվող հասկացություններն են՝

1) **պատերազմական գործողություններ**՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողություններ:

2) **զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձ**՝ պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձ:

3) **պետական աջակցություն**՝ բնակարանային ապահովման նպատակով պետական բյուջեի միջոցների հաշվին հիփոթեքային վարկի կանխավճարի տրամադրում և ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) սուբսիդավորում՝ Կարգով սահմանված պայմաններով:

4) **շահառու**՝ Կարգի 3-րդ կետով սահմանված ընտանիք:

5) **հիփոթեքային վարկ**՝ Հայաստանի Հանրապետությունում բնակտարածք ձեռք բերելու նպատակով Կարգին համապատասխան տրամադրված հիփոթեքային վարկ:

6) **կազմակերպություն**՝ առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ, որոնք Կարգի շրջանակներում համագործակցում են լիազոր մարմնի հետ:

7) **ընտանիք**՝ ամուսնության, ազգակցության կամ որդեգրման վրա հիմնված մարդկանց խումբ, որի անդամները հաշվառված են նույն բնակության հասցեում և (կամ) բնակվում են նույն հարկի տակ և վարում են ընդհանուր տնտեսություն:

8) **տեղահանված ընտանիք**՝ պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության բռնազավթված համայնքներից, այդ թվում՝ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքային համայնքի և Թաղավարդ գյուղական համայնքի բռնազավթված հատվածներից և Քաշաթաղի շրջանի Բերձոր, Քարեգահ և Ներքին Սուս համայնքներից տեղահանված ընտանիքներ (այդ թվում՝ 1 անձից բաղկացած):

9) **բնակարանային ապահովման կարիք ունեցող անձ կամ ընտանիք**, որի՝
ա. սեփականության իրավունքով պատկանող բնակտարածքի ընդհանուր մակերեսով ապահովվածությունը մեկ անձի կամ երկու անձից կազմված ընտանիքի դեպքում պակաս է 28 քառակուսի մետրից, իսկ երկուսից ավելի անդամներից կազմված ընտանիքների դեպքում՝ յուրաքանչյուր անդամի հաշվով պակաս է 12 քառակուսի մետրից,

բ. ինը տարեկանից բարձր տարբեր սեռի անձինք, բացի ամուսիններից, բնակվում են մեկ սենյակում և բնակտարածքի ընդհանուր մակերեսով ապահովվածությունը պակաս է 48 քառակուսի մետրից,

գ. անդամը տառապում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 18-ի «Անձին առանձին սենյակի կամ լրացուցիչ բնակելի մակերեսի իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 44-Ն հրամանով հաստատված հիվանդություններից որևէ մեկով, որի դեպքում նրա համար պահանջվում է առանձին սենյակ կամ լրացուցիչ բնակելի մակերես, և որը հաշվի առնելու դեպքում ընտանիքի մյուս անդամներից յուրաքանչյուրին կմնա 12 քառակուսի մետրից պակաս մակերես.

10) **բնակարանային պայմանների արհեստական վատթարացում**՝ շահառուին կամ շահառու ընտանիքի որևէ անդամին սեփականության իրավունքով, այդ թվում՝ բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակտարածքի օտարում 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո.

11) **վարկային պայմանագիր**՝ կազմակերպության և շահառուի միջև կնքված հիփոթեքային վարկի վարկային պայմանագիր.

12) **սուբսիդավորման գումար**՝ հիփոթեքային վարկի ամենամյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում՝ Կարգի 12-րդ կետով սահմանված սահմանաչափերով.

13) **վկայագիր**՝ լիազոր մարմնի կողմից տրամադրվող՝ շահառու հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ՝ Կարգի 2և 1-ին համապատասխան.

14) **հատուկ հաշիվ**՝ բանկային հաշիվ, որին լիազոր մարմինը փոխանցում է կանխավճարը և սուբսիդավորման գումարը.

15) **պայմանագիր**՝ լիազոր մարմնի և կազմակերպության միջև կնքված համագործակցության պայմանագիր:

3. Կարգով սահմանված պայմաններով պետական աջակցությունից կարող են օգտվել պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող ընտանիքները:

4. Պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձի ընտանիքի անդամ են համարվում՝

1) ամուսինն ու չամուսնացած զավակները.

2) չամուսնացած լինելու դեպքում՝ ծնողները, չամուսնացած քույրը և եղբայրը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԵՐԸ

5. Պետական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային վարկավորման միջոցով բնակտարածք ձեռք բերող շահառուին և ուղղվում է հիփոթեքային վարկի կանխավճարի վճարմանը և ամենամյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանը:

6. Կարգի 4-րդ կետով սահմանված ընտանիքների անդամներին պետական աջակցությունը կարող է տրամադրվել միասին՝ դիտարկելով որպես մեկ շահառու ընտանիք՝ համատեղ բնակվելու ցանկության դեպքում: Առանձին բնակվելու ցանկության դեպքում պետական աջակցությունը տրամադրվում է Կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված շահառու ընտանիքին:

7. Ազգակցական կապ (ծնող և զավակ) ունեցող տարբեր շահառու ընտանիքները համատեղ բնակվելու ցանկության դեպքում կարող են միավորել վկայագրերը:

8. Շահառուն պետական աջակցությունից կարող է օգտվել մեկ անգամ (մեկ հիփոթեքային վարկի շրջանակներում):

9. Շահառուն իրավունք չունի օգտվել պետական աջակցությունից, եթե՝

1) հանդիսանում է բնակարանային պայմանների արհեստական վատթարացում իրականացրած անձ.

2) արդեն օգտվել է Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 2-ի N 705-Ն որոշմամբ հաստատված ծրագրից:

10. Եթե շահառուն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված ծրագրի շահառու, կարող է օգտվել պետական աջակցությունից, որի դեպքում պետական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված ծրագրին համապատասխան հատկացված աջակցության և Կարգին համապատասխան տրամադրվելիք աջակցության տարբերության չափով:

11. Պետական աջակցության տրամադրման պայմաններն են՝
- 1) հիփոթեքային վարկի նվազագույն ժամկետը՝ 120 ամիս.
 - 2) հիփոթեքային վարկի տարեկան տոկոսադրույքը՝ առավելագույնը 12.75%.
 - 3) հիփոթեքային վարկի արժույթը՝ ՀՀ դրամ.
 - 4) ձեռք բերվող բնակտարածքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է շահառու ընտանիքի բոլոր անդամների (բացառությամբ այն համավարկառուների, ովքեր չեն հանդիսանում ընտանիքի անդամ) անունով.
 - 5) հիփոթեքային վարկի ամբողջական մարման դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը.
 - 6) հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակտարածքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց (բացառությամբ ընտանիքի անդամների) անունով գրանցելու դեպքում (անկախ բաժնեմասի չափից) դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը.
 - 7) հիփոթեքային վարկի գործողության ընթացքում գրավ դրված բնակտարածքն այլ գրավի առարկա դարձնելու (հաջորդող գրավ) դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ (բացառությամբ տվյալ հիփոթեքային վարկի շրջանակներում ձեռք բերված բնակտարածքի վերանորոգման նպատակով հաջորդող գրավի ձևակերպման դեպքերի), այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը.
 - 8) հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի (վարկառուի) մահվան դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, եթե շահառուի ժառանգը չի հանդիսանում Կարգի 4-րդ կետում նշված ընտանիքի անդամ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը.
 - 9) հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում (եթե ժամանակացույցով նախատեսված ամսական վճարները գերազանցում են Կարգի 12-րդ կետով սահմանված սահմանաչափերը) 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը.
 - 10) հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակտարածքն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է վերադարձման պետությանը՝ փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով.
 - 11) պետական աջակցության տրամադրման օրվա դրությամբ ձեռք բերվող բնակտարածքը 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ չի հանդիսացել շահառու ընտանիքի որևէ անդամի սեփականությունը, այդ թվում՝ չի պատկանել բաժնային սեփականությամբ:
12. Պետական աջակցությունը, կախված շահառու ընտանիքի անդամների թվաքանակից, տրամադրվում է հետևյալ աղյուսակում նշված չափերով.

Հ/Հ	Շահառու ընտանիքի անդամների թվաքանակը	Բնակտարածքի ձեռքբերման արժեքում պետական մաս- նակցության առավելագույն սահմանում	Կանխավճարի առավելագույն չափը, դրամ	Վարկի մայր գու- մարի մարմանն ուղղված գումար, դրամ		Տոկոսագումարի վճարմանն ուղղված գումար, դրամ		Պետական աջակցության ընդհանուր (10 տարվա ընթացքում) առավելագույն քանակը
				ամսա- կան	հանրա- գումարային	ամսա- կան (առավել- ազույնը)	հանրա- գումարային	

	մեկ կամ երկու երեք	20 000 000	2 000 000	150 000	18 000 000	191 250	11 570 625	31 570 625
	չորս և ավելի	21 000 000	2 100 000	157 500	18 900 000	200 812	12 149 156	33 149 156
		22 000 000	2 200 000	165 000	19 800 000	210 375	12 727 687	34 727 687

3. ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Շահառուն մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը դիմում է լիազոր մարմին (էլեկտրոնային կամ թղթային եղանակով)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ընտանիքի չափահաս անձի անձնագրի (հաշվառման էջով), ամուսնության վկայականի, անչափահաս երեխայի ծննդյան վկայականի և ընտանիքի անդամին հանրային ծառայության համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենները:

2) տեղեկանքներ ընտանիքի կազմի մասին՝ հաշվառման և բնակության վայրերից:

3) տեղեկանքներ բնակարանային պայմանների մասին՝ հաշվառման և բնակության վայրերից:

4) ընտանիքի անդամի՝ զոհվելու (մահանալու) մասին զինկոմիսարիատից կամ Արցախի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճռի պատճենը կամ մահվան պատճառական կապի մասին բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի տված տեղեկանքի պատճենը:

5) ընտանիքի յուրաքանչյուր անդամին Արցախի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքով պատկանող բնակտարածքի վերաբերյալ տվյալների, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո բնակտարածքի օտարման մասին տեղեկանք(ներ)ը:

6) անհրաժեշտության դեպքում Կարգով նախատեսված դրույթներին համապատասխան այլ փաստաթղթեր:

14. Լիազոր մարմինը, ստացված դիմումի հիման վրա, 10 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է դիմողի շահառու հանդիսանալու մասին որոշում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայություն կատարած հարցման միջոցով ստացած տեղեկատվությունը, իսկ չհանդիսանալու դեպքում՝ սահմանված կարգով այդ մասին տեղեկացնում է դիմողին:

15. Շահառու հանդիսանալու մասին դրական որոշման դեպքում լիազոր մարմինը մեկշաբաթյա ժամկետում շահառուին է տրամադրում վկայագիրը:

16. Հիփոթեքային վարկի կանխավճարը փոխանցվում է հատուկ հաշվին կազմակերպության կողմից հիփոթեքային վարկը հաստատելուց հետո լիազոր մարմին դիմելու դեպքում: Կանխավճարի՝ Կարգով սահմանված սահմանաչափը գերազանցելու դեպքում, գերազանցող մասը վճարվում է շահառուի կողմից:

17. Շահառուի հետ համապատասխան վարկային պայմանագիր կնքելուց և հիփոթեքային վարկը փաստացի հատկացնելուց հետո, կազմակերպությունը լիազոր մարմնին է տրամադրում շահառուին տրամադրած հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցն ու վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկությունները՝ Կարգի 2-ին համապատասխան:

18. Լիազոր մարմինն ամսական պարբերականությամբ հատուկ հաշվին է փոխանցում սուբսիդավորման գումարները՝ ըստ Կարգի 17-րդ կետում նշված ժամանակացույցի: Ժամանակացույցով նախատեսված վճարումները (սուբսիդավորման գումարի սահմանաչափին համապատասխան) չիրականացնելու դեպքում ժամկետանց պարտավորությունների համար տույժերը, տուգանքները վճարում է լիազոր մարմինը:

19. Եթե հիփոթեքային վարկի գծով ամսական վճարները (մայր գումար և տոկոսագումար) գերազանցում են սուբսիդավորման գումարի սահմանաչափերը, ապա Կարգի 17-րդ կետում նշված ժամանակացույցով սահմանված ամսական վճարների և սուբսիդավորման գումարի տարբերությունը վճարվում է շահառուի կողմից:

20. Եթե հիփոթեքային վարկի գծով ամսական վճարները (մայր գումար և

տոկոսագումար) ավելի փոքր են, քան սուբսիդավորման գումարի սահմանաչափերը, ապա սուբսիդավորման գումարի մնացորդը կարող է ուղղվել ձեռք բերվող բնակտարածքի բարեկարգմանը՝ վերանորոգման վարկի ստացման միջոցով:

21. Լիազոր մարմինը պետական աջակցության տրամադրման ժամանակաշրջանում իրականացնում է մոնիթորինգ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձև 1



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵ

« ____ » _____ 2022թ.

ՎԿԱՅԱԳԻՐ N _____

Սույն վկայագիրը հավաստում է, որ _____ը,
շահառուի (վարկառուի) անուն, հայրանուն, ազգանուն
անձը հաստատող փաստաթուղթ՝ _____, հանդիսանում է
սերիա, համար

Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի _____ -ի
N ____-Ն որոշման շահառու:

- Ընտանիքի անդամներ՝ 1 _____
անուն, հայրանուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի սերիա, համար
2 _____
3 _____
... _____

Վկայագիրը երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային վարկի միջոցով բնակտարածքի ձեռք բերման (Կարգով նախատեսված դեպքերում՝ նաև վերանորոգման) դեպքում հանրագումարային մինչև _____ ՀՀ դրամ մայր գումարի և դրա նկատմամբ հաշվեգրվող մինչև _____ ՀՀ դրամ տոկոսագումարի ամսական մարումներին ուղղված գումարի սուբսիդավորում:

Վկայագրի գործողության ժամկետը 365 օրացուցային օր է՝ հաշված տրամադրման օրվանից:

ԱՀ բնակարանային հարցերի կոմիտեի նախագահ՝

_____ անուն, ազգանուն

_____ ստորագրություն

Կ.Տ.

Ձև օրինակելի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱԼՔՈՎ ԶՈՇՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ)
ԿԱՍ ԱՆՀԱՅՏ ԲԱՅԱԿԱՅՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԼՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՈՒ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ**

ք. Երևան

«___» «_____» 2022թ.

Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ի դեմս Կոմիտեի նախագահ _____-ի, ով գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս գործադիր տնօրեն _____, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պայմանագրով կարգավորվում են պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձանց տեղահանված ընտանիքների համար Հայաստանի Հանրապետությունում բնակարանային մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակության և դրամական միջոցների փոխանցման հետ կապված հարաբերությունները Կոմիտեի և Կազմակերպության միջև:

2. Պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **պատերազմական գործողություններ**՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողություններ:

2) **զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձ**՝ պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձ:

3) **պետական աջակցություն**՝ բնակարանային ապահովման նպատակով պետական բյուջեի միջոցների հաշվին հիփոթեքային վարկի կանխավճարի տրամադրում և ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) սուբսիդավորում՝ Կարգով սահմանված պայմաններով:

4) **շահառու**՝ պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձի տեղահանված՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող ընտանիք:

5) **հիփոթեքային վարկ**՝ Հայաստանի Հանրապետությունում բնակտարածք ձեռք բերելու նպատակով տրամադրված հիփոթեքային վարկ:

6) **վարկային պայմանագիր**՝ Կազմակերպության և շահառուի միջև կնքված հիփոթեքային վարկի վարկային պայմանագիր:

7) **սուբսիդավորման գումար**՝ հիփոթեքային վարկի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում:

8) **վկայագիր**՝ լիազոր մարմնի կողմից տրամադրվող՝ շահառու հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ:

9) **հատուկ հաշիվ**՝ բանկային հաշիվ, որին լիազոր մարմինը փոխանցում է կանխավճարը և սուբսիդավորման գումարը:

3. Կողմերն անվերապահորեն ընդունում են, որ Պայմանագրի շրջանակներում հատուկ հաշվին փոխանցված կանխավճարը և սուբսիդավորման գումարները կարող են օգտագործվել բացառապես Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 10-ի N 505-Ն որոշմանը համապատասխան և չեն կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի պարտավորությունների դիմաց կամ որևէ կերպ կանխիկացվել:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Կողմերն իրավունք ունեն՝

1) Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով դադարեցնելու Պայմանագրի գործողությունը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը.

3) իրականացնելու օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

5. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) հիփոթեքային վարկի հաստատումից հետո լիազոր մարմնին տեղեկացնել վկայագիր ստացած շահառուի կողմից իրականացվող գործարքի արժեքի և կանխավճարի չափի մասին.

2) վկայագիր ստացած շահառուի և Կազմակերպության միջև վարկային պայմանագիր կնքվելուց և հիփոթեքային վարկը փաստացի հատկացնելուց հետո ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտե ներկայացնել հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցն ու վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկությունները՝ Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 10-ի N 505-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի Ձև 2-ին համապատասխան: Եթե վարկային պայմանագրի շրջանակներում շահառուին տրամադրվում է նաև վերանորոգման վարկ, ապա վճարման ժամանակացույցում պետք է նշվի երկու վարկերի շրջանակներում ձևավորված վճարումների հանրագումարը (մայր գումարի և տոկոսագումարի).

3) շահառուի հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում՝

ա. կիրառել վարկի մարման զսպանակաձև մարումների տեսակը,

բ. վճարման ժամանակացույցում որպես վճարման օր սահմանել յուրաքանչյուր ամսվա 20-ը.

4) շահառուից ստանալ գրավոր հավաստում՝ հիփոթեքային վարկի ամբողջական մարման դեպքում դրամական աջակցության վճարումը դադարեցնելու, ինչպես նաև հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակտարածքն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը պետական բյուջե վերադարձնելու պայմանների վերաբերյալ տեղեկացված լինելու մասին.

5) շահառուից ստանալ գրավոր հավաստում՝ հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակտարածքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց (բացառությամբ ընտանիքի անդամների) անունով գրանցելու դեպքում (անկախ բաժնեմասի չափից) դրամական աջակցության վճարումը դադարեցնելու վերաբերյալ տեղեկացված լինելու մասին.

6) շահառուից ստանալ գրավոր հավաստում՝ հիփոթեքային վարկի գործողության ընթացքում գրավ դրված բնակտարածքն այլ գրավի առարկա դարձնելու (հաջորդող գրավ) դեպքում դրամական աջակցության վճարումը դադարեցնելու վերաբերյալ տեղեկացված լինելու մասին.

7) շահառուից ստանալ գրավոր հավաստում՝ հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի (վարկառուի) մահվան դեպքում դրամական աջակցության վճարումը դադարեցնելու վերաբերյալ տեղեկացված լինելու մասին, եթե շահառուի ժառանգը չի հանդիսանում ընտանիքի անդամ.

8) շահառուից ստանալ գրավոր հավաստում՝ շահառուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում (եթե ժամանակացույցով նախատեսված ամսական վճարները գերազանցում են սուբսիդավորման գումարների սահմանաչափերը) 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում դրամական աջակցության վճարումը դադարեցնելու վերաբերյալ տեղեկացված լինելու մասին.

9) սույն կետի 4-8-րդ ենթակետերով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Կոմիտեին.

10) շահառուներին հիփոթեքային վարկը փաստացի հատկացնելուց հետո, ամսական պարբերականությամբ՝ հերթական վճարման օրվան նախորդող 5 օրերի ընթացքում, բայց ոչ ուշ, քան վճարման օրվան նախորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով (info.hcnkr@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով) Կոմիտեին տրամադրել հիփոթեքային վարկի քաղվածքները:

11) շահառուի՝ հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցում ցանկացած փոփոխության (վաղաժամ մարում, աջակցության այլ ծրագրերի շրջանակներում ստացված աջակցություն և այլն) դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեին տրամադրել փոփոխված ժամանակացույցը:

12) ժամանակացույցով նախատեսված վճարումները (սուբսիդավորման գումարների սահմանաչափերին համապատասխան) Կոմիտեի կողմից չիրականացվելու դեպքում Կոմիտեին տրամադրել տեղեկատվություն ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ (վճարման ենթակա տույժեր, տուգանքներ)՝ դրանց ծագման պահից հետո 2 բանկային օրվա ընթացքում:

13) վեցամսյա պարբերականությամբ Կոմիտեին ներկայացնել հաշվետվություն՝ սուբսիդավորման գումարների օգտագործման վերաբերյալ:

6. Կոմիտեն պարտավոր է՝

1) Պայմանագրի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տեղեկությունները ստանալուց հետո հատուկ հաշվին փոխանցել կանխավճարը և սուբսիդավորման գումարները՝ ամսական պարբերականությամբ (մինչև տվյալ շահառուի համար նախատեսված դրամական աջակցության սահմանաչափի լրանալը):

2) ժամանակացույցով նախատեսված վճարումները (սուբսիդավորման գումարների սահմանաչափերին համապատասխան) չիրականացնելու դեպքում վճարել ժամկետանց պարտավորությունների նկատմամբ հաշվեգրված տույժերն ու տուգանքները:

3) «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով սահմանված կարգով ապահովել Պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների գաղտնիությունը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

7. Պայմանագրով նախատեսված ծառայությունները կողմերը մատուցում են անհատույց (անվճար): Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը չեն փոխհատուցվում:

4. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

8. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան Պայմանագրի անբաժանելի մասը:

9. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

10. Պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է Պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

11. Պայմանագիրը լուծվում է լուծման օրվա դրությամբ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերի կողմից պատշաճ կատարելու, ինչպես նաև չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասները լրիվ հատուցելու պայմանով:

12. Պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում այն կնքելու օրը:

13. Պայմանագրում նշված անհրաժեշտ տեղեկությունները փոխանակվում են Կոմիտեի և Կազմակերպության միջև պատշաճ ծանուցման միջոցով:

5. ԳՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոմիտե

Կազմակերպություն

Գտնվելու վայրը՝ _____

Գտնվելու վայրը՝ _____

Հեռ.՝ _____

Հեռ.՝ _____

Էլ. Փոստ՝ _____

Էլ. Փոստ՝ _____

(անունը, ազգանունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

Կ.Տ.

(ստորագրությունը)

(ստորագրությունը)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՂՄԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մայիսի 2022թ.

N 511-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂԻ
ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 24-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետությունում փետրվարի 5-ը նշել որպես Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգի աշխատողի օր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մայիսի 2022թ.

N 512-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ք ն շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի «Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N 94 որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 3-րդ կետում «էկոնոմիկայի և» բառերը հանել.

2) 6-րդ կետում «աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերը փոխարինել «սոցիալական զարգացման և միգրացիայի» բառերով.

3) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«11. Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության շենք».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին կետ.

«13.1. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված ու Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի, Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Արցախի Հանրապետության ոստիկանության հետ համաձայնեցված՝ սահմանամերձ բնակավայրերի հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքեր».

5) 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«14. «Արցախի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության շենք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մայիսի 2022թ.

N 516-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 26-Ի N 509-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք յ յ մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի «Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին առողջարանային բուժման և հանգստյան տների ուղեգրերի ձեռքբերման և դրանք քաղաքացիներին հատկացնելու կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 18-ի N 228 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 509-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 2-րդ կետում, որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետում, որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2-րդ կետում «աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերը փոխարինել «սոցիալական զարգացման և միգրացիայի» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետում «տրամադրվում են նախարարության» բառերից հետո լրացնել «աշխատակազմի» բառը,

բ. 5-րդ կետում «Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած բնակավայրերում» բառերը փոխարինել «բնագավառում տարածքներում գտնվող համայնքներում» բառերով և «տարածքային բաժին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն կարգի 5.2-րդ կետում նշված դեպքի» բառերը,

գ. 5.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.2-րդ կետ.

«5.2. «Մանկական ուղեղային կաթված» հիվանդությամբ տառապող հաշմանդամ երեխային ուղեգիր հատկացնելու նպատակով դիմելը և ուղեգիր հատկացնելը իրականացվում է սույն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված ընթացակարգով:»,

դ. 10.1-ին կետում «կետով նախատեսված առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված քաղաքացիներին ուղեգրերը հատկացվում են Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարի հրամանով՝ նախարարության աշխատակազմի ընտանիքների կարիքավորության գնահատման և սոցիալական աջակցության» բառերը փոխարինել «կետում չնշված քաղաքացիներին ուղեգրերը հատկացվում են Արցախի Հանրապետության սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարի կողմից՝ նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության և հաշմանդամների հիմնահարցերի» բառերով,

ե. 11-րդ կետում «ուղեգիր» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն կարգի 11.2-րդ կետում նշված դեպքի» բառերը,

զ. 11.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել,

է. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11.2-րդ կետ.

«11.2. «Մանկական ուղեղային կաթված» հիվանդությամբ տառապող

հաշմանդամ երեխային առողջարանային բուժման ուղեգիր հատկացվում է յուրաքանչյուր տարի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ», «գ», «ե» և «է» պարբերությունների, որոնց գործողությունը տարածվում է 2022 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մայիսի 2022թ.

N 517-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի ապրիլի 12-ի ՆՀ-659-Ն հրամանագրով Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Մննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությունը և այն միացնելով «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

3. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով էներգետիկայի պետական տեսչությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տրանսպորտային տեսչությունը և դրանք միացնելով «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

4. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով շուկայի և սպառողների շահերի պաշտպանության տեսչությունը և այն միացնելով «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

5. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչությունը և այն միացնելով «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

6. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնելով բնապահպանական և ընդերքի պետական տեսչությունը և այն միացնելով «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

7. Սահմանել, որ «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հանդիսանում է «Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ», «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ», «Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ», «Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմ» և «Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկների՝ վերակազմակերպմանը համապատասխանող բնագավառների իրավահաջորդը:

8. Արցախի Հանրապետության պետական նախարարին, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին, Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի նախագահին՝ սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարությունն ներկայացնել առաջարկություններ.

1) մեկամսյա ժամկետում՝ «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը ու չափը հաստատելու վերաբերյալ.

2) սույն որոշմամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ:

9. Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի նախագահին՝ մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարությունն ներկայացնել առաջարկություններ «Արցախի Հանրապետության պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ:

10. Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ վերաբաշխումներ կատարել Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում՝ մեկամսյա ժամկետում:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2022թ.

N 520-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 217 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանիների կարմիր գրքի կենդանիների ցանկը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բույսերի կարմիր գրքի բույսերի ցանկը հաստատելու մասին» N 217 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մայիսի 12-ի N 520-Ն որոշման

«Հավելված 1
ԼՂՀ կառավարության 2006 թվականի
ապրիլի 26-ի N 217 որոշման

Ց Ա Ն Կ

ԱՆՈՂԱՇԱՐ ԿԵՆՊԱՆԻՆԵՐ									
Դասը	Կարգը	Ընտանիքը	Տեսակը	Class	Order	Family	Species	Author	Կարգավիճակը
1	2	3	4	5	6	7	8	9	10
Փորոտանիներ	Սկավառակատանիներ	Բիթինիդներ	Տրոշելի խխունջ	Gastropoda	Discopoda	Bithyniidae	Bithynia troscheli	Paasch 1842	CR B2a
		Տափակ խխունջներ	Կատարավոր խխունջ			Planorbidae	Pianorbis carinatus	O.F. Muller 1774	CR B1a+B2a
			Հարթ խխունջ				Gyraulus laevis	Alder1838	EN B 1a+ B2a
			Կանոնավոր խխունջ			Orculidae	Gyraulus regularis	Hartmann 1841	CR B2a
	Ցողունաչափորներ				Stylommatophora	Lestidae			CR B2a.
		Նեղ խխունջներ				Vertiginider			
			Նեղ խխունջ				Vertigo angustior	Jeffreys 1830	CR B1a+ B2a; IUCN (ver 2.3)-LR/CD; Annex II
		Օրկուլիդներ				Orculidae			
			Խճաքարային խխունջ				Orculella ruderalis	Akramowski, 1947	CR B1a+B2a
Միջատներ				Insecta					
	Ճպուտներ				Odonata				
		Լեսթիդներ				Lestidae			
			Մեծաչք ճպուտ				Lestes macrostigma	Eversmann 1836	VU B 1b+B 2b
			Սիմպեկմա ճպուտ				Sympetma paedisca	Brauer 1877	VU B 1b+B 2b
		Նետիկներ				Coenagrionidae			
			Նետիկ զինված				Coenagrion armatum	Charpentier 1840	CR B 1a + B 2a
			Նետիկ նրբազեղ				Coenagrion scitulum	Rambur 1877	EN B2a. (ver.3.1)DD
		Պլատիքենմիդներ				Platycmenididae			
			Ճպուտ տափակատու				Platycnemis pennipes	Pallas 1771	EN B 1a + 2a
		Շերեփագզիներ				Aeshnidae			
			Կապույտ ճպուտ				Aeshna cyanea	Mueller 1764	EN B2a

			Սդոցակիր ճպուռ				Aeshna serrata	Hagen 1856	EN B2a
		Գոմֆիդներ				Gomphidae			
			Ուբադչի ճպուռ				Gomphus ubadschii	Schmidt 1953	VU B 1b+B 2b
			Նմանաձև ճպուռ				Onychogomphus assimilis fulvipennis	Schneider 1845	VU B1b+B 2b; IUCN (ver 3.1) VU A2ac+3c KK CCCP
		Իսկական ճպուռներ				Libellulidae			
			Ճահճային ճպուռ				Leucorrhinia pectoralis	Charpentier 1825	CR B1a+ B2a; Annex II
			Սևծովյան ճպուռ				Libellula pontica	Selys 1887	EN B B2ab(iii); IUCN (ver 3.1) NT; KK CCCP.
			Հարթափոր ճպուռ				Libellula depressa	Linnaeus 1758	VU B 1b+B 2b
			Տափակ ճպուռ				Sympetrum depressiusculum	Selys 1841	EN B 1a+B2a
	Աղոթարարներ				Mantodea				
		Աղոթարարներ իսկական աղոթարարներ				Mantidae			
			Մովորական աղոթարար				Mantis religiosa	Linnaeus 1758	VU B 1b+B 2b
	Ուղղաթևեր				Orthoptera				
		Հաստածղրիդներ				Bradyporidae			
			Հաստածղրիդ լայնացած				Bradyporus dilatatus	Stal 1875	EN B 1a+B2a
		Ծղրիդներ				Tettigoniidae			
			Սդոցապոչ անդրկովկասյան				Poecilimon geoktschaicus	Stshelkovnikov 1910	EN B 1a+B2a
			Սդոցապոչ հայկական				Poecilimonella armeniaca	Uvarov 1916	EN B 1a+B2a
			Ֆիտոդրիմադուզա հայկական				Phytodrymadusa armeniaca	Ramme 1939	EN B1a+B2a
			Ուվարովիստա Սատունինի				Uvarovistia satunini	Uvarov 1916	B 1ab(iii)+ 2ab(iii)
			Ռյոզելի երկգույն ծղրիդ				Bicolorana roeseli	Hagenbach 1822	CR B1a
			Սագա տափաստանային				Saga pedo	Pallas 1771	CR B1a+B2a; IUCN (ver 2.3.) VU B1+2bd; Annex II
	Կարծրաթևեր կամ Բզեզներ				Coleoptera				
		Գնայուկ բզեզներ				Carabidae			
			Ֆայետիի				Procerus scabrosus	Cavazzutti	VU B 1ab(iii)+B 2ab(iii)

			Կողրնջակեր ցայտագնայուկ				fallettianus	1997	
			Դարչնագույն առ- վակային գնայուկ				Trechus infuscatus	Chaudoir 1850	CR B2a
			Խնձոքյանի գնայուկ				Deltomerus khnzoriani	Kurnakov 1960	CR B2a
			Տոնական գնայուկ				Poecilus festivus	Chaudoir 1868	VU B1b (iii) + B 2b(iii).5
			Կովկասյան բնդեռիկ				Glaphyrus caucasicus	Kraatz 1887	EN B 1ab(iii) +B2ab(iii)
			Ռեյթերի հացաբզեզ				Anisoplia reitteriana	Semenov 1903	EN B1ab (iii) +B2ab(iii)
			Արաքսյան բնդեռ				Tanyproctus araxidis	Reitter 1901	EN B 1a+B2a
			Զարդավոր չրիական				Aeoloides figuratus	Germar 1844	CR B2a
			Սևագլուխ չրիական				Drasterius atricapillus	Germar 1824	CR B2a
			Սանրաբեղ չրիական				Ctenicera pectinicornis	Linnaeus 1758	VU B 1b
			Արաքսյան չրիական				Cardiophorus araxicola	Khnzorian 1970	CR (B1ab(ii, iii, v), B2ab (ii, iii, v)
			Փոքր չրիական				Craspedostethus permodicus	Faldermann 1835	VU B 1b(iii)+B 2b (iii)
		Ոսկեբզեզներ					Buprestidae		
			Մորթիավոր ոսկեբզեզ				Acmaeoderella pellitula	Reitter 1890	EN B 1a+B 2a
		Ծաղկեփոռե- կերներ					Alleculidae		
			Նմանաձև ծաղկեփոռեկեր				Cteniopus persimilis	Reitter 1890	CR B1a
		Սևամարմիններ					Tenebrionidae		
			Օրդուբադյան սևամարմին				Adelphinus ordubadensis	Reitter 1890	EN B1a
			Սևամարմին աքսոբված				Entomogonus amandanus	Reitter 1901	
			Նեղ սևամարմին				Laena constricta	Khnzorian 1957	EN B 1ab(iii)+B2ab(iii)
			Սեմյոնովի սևամարմին				Cyphostethe semenovi	Reitter 1895	EN B 1ab(iii)+B2ab(iii)
		Երկարաբե- ղիկներ					Cerambycidae		
			Կաղնու մեծ երկարաբեղիկ				Cerambyx cerdo acuminatus	Motschulsky 1852	VU B1a+B 2a; IUCN (ver 2.3) VU A1c+2c; Annex II; KK CCCP (C. c. cerdo Linnaeus)
			Ալպյան ռոզալիա				Rosalia alpina	Linnaeus 1758	EN B 1a+B2a; IUCN (ver 2.3) VU A1c+2c; Annex II; KK CCCP

			Գորբունովի երկարաբեղիկ				Dorcadion gorbunovi	Danilevsky 1985	EN B 1a
			Կիսափայլ երկարաբեղիկ				Dorcadion semilucens	Kraatz 1873	EN B 1a+B2a
	Թեփուկաթևեր կամ թիթեռներ				Lepidoptera				
		Առագաստաթիթեռներ				Papilionidae			
			Մենեոզինա կամ սև ապոլոն				Parnassius mnemosyne rjabovi	Sheljuzhko 1935	VU B 1a
			Ապոլոն				Parnassius apollo kashtshenkoi	Sheljuzhko 1908	VU B 1a; IUCN (ver 2.3, VU A1cde); Annex II:
			Ալեքսանոր առագաստաթիթեռ				Papilio alexanor orientalis	Romanoff 1884	VU B 1ab(iii)+B 2ab(iii)
			Մախան				Papilio machaon	Linnaeus 1758	VU B 1ab(iii)+B 2ab(iii)
		Ճերմակաթիթեռներ				Pieridae			
			Բոուդենի ճերմակաթիթեռ				Artogeia bowdeni	Eitschberger 1984	EN B1a+B2ab(iii)
			Ավրորինա դեղնաթիթեռ				Colias aurorina Herrich	Colias aurorina Herrich-Schaffer 1850	VU B 1b(iii)+B 2b(iii)
			Կանաչավուն դեղնաթիթեռ				Colias chlorocoma	Christoph 1888	VU B1ab(iii)+B 2ab(iii)
		Սատիրներ				Satyridae			
			Աֆրիկական փրոթերեբիա				Proterebia afra hyrcana	Staudinger 1901	VU B1a+B2a
		Նիմֆալիդներ				Nymphalidae			
			Բրենթիա Ինո				Brenthis ino schmitzi	Wagener 1983	VU B 1a+B2a
		Կապտաթիթեռներ				Lycaenidae			
			Տարագոյգ կապտաթիթեռ				Thersamonolycaena dispar rutila	Werneburg 1864	CR B1a+B2a
			Ռոմանովի թումարես				Tomares romanovi	Christoph 1882	VU B 1ab(iii)+B2ab(iii)
			Ալկոն կապտաթիթեռ				Maculineaalcon monticola	Staudinger 1901	VU B1a+B2a
			Արիոն կապտաթիթեռ				Maculinea arion zara	Jachontov 1935	VU B 1a+B2a; IUCN (ver 2.3, LR/NT), AnnexII
			Մթնշաղային կապտաթիթեռ				Maculinea nausithous	Bergstrasser 1779	VU B 1a+B2a; IUCN (ver 2.3, LR/NT); AnnexII
			Անդրկովկասյան կապտաթիթեռ				Plebejus transcaucasicus	Rebel 1901	EN B1a+B2ab (iii)
			Դիանա կապտաթիթեռ				Neolysandra diana	Miller 1923	EN B1a+B2a

			Հուբերտի կապտաթիթեռ				Agrodiaetus huberti	Carbonell 1993	EN B1a+B2a
			Իֆիգենիա կապտաթիթեռ				Agrodiaetus iphige nia araratensis	De Lesse 1957	EN B1a+B2a
			Նինայի կապտաթիթեռ				Agrodiaetus ninae	Forster 1956	EN B2a
		Իլիկաթիթեռներ				Sphingidae			
			Կպչուկի իլիկաթիթեռ				Hyles hippophaes caucasica	Denso 1913	VU B1a+B2a; IUCN (ver 2.3, DD); AnnexII
			Պրոզերպինա իլիկաթիթեռ				Proserpinus proser pina	Pallas 1772	VU B1a+B2a; IUCN (ver 2.3, DD); AnnexII
		Արջաթիթեռներ				Arctiidae			
			Կարելինի մռայլ արջաթիթեռ				Axiopoena karelini	Axiopoena karelini Mnnntrins, 1842	VU B1a+B 2a
	Թաղանթա- թևեր				Hymenoptera				
		Մեգախիլիդներ				Megachilidae			
			Սգաթև մեղու				Lithurge fuscipenne	Lepeletier 1841	VU B 1a+B 2a
			Մեղու Դեսեպտորիա				Megachile deseptoria	Peres 1876	VU B 1a+B 2a
			Մունախոտի մեղու				Osmia cerinthides	F. Morawitz 1876	VU B 1a+B 2a
		Անթոֆորիդներ				Anthophoridae			
			Ամրակազմ մեղու				Anthophora robusta	Klug 1845	VU B 1a+B 2a
			Մանուշակագույն մեղու- ատաղձագործ				Xylocopa violacea	Linnaeus 1758	VU B 1a+B 2a
		Իսկական մեղուններ				Apidae			
			Իշամեղու հայկական				Bombus armeniacus	Radoszkovski 1877	VUB1a+B2a
			Իշամեղու մարգագետնային				Bombus pratorum	Linnaeus 1761	VU B 1a+B 2a
			Իշամեղու գետնային				Bombus terrestris	Linnaeus 1758	VU B 1a+B 2a
			Իշամեղու ձևափայլ				Bombus niveatus	Kriechbaumer 1870	VU B 1a+B 2a
			Պորչինսկու իշամեղու				Bombus portshinskii	Radoszkowsky 1884	VU B1a+B 2a
			Իշամեղու դաղեստանյան				Bombus daghestanicus	Radoszkowsky 1888	VUB 1a+B 2a
		Մրջյուններ				Formicidae			
			Ռավագինիի մրջյուն				Myrmica ravinii	Finzi 1923	EN B 1a+B 2a
			Կարմրավուն				Manica rubida	Latreille 1802	EN B 1a+B 2a

			մրջյուն						
			Կիսաստամ մրջյուն				Creumatogaster subdentata	Mayr 1877	EN B 2a
			Հարթ մրջյուն				Tetramorium levigatus	Karawajew 1926	CR B2a
	Երկթևեր					Diptera			
		Գիշաճանճեր				Asilidae			
			Հսկա գիշաճանճ				Satanas gigas	Evermann 1885	VU B 1ab(iii)+B 2ab(iii); KK CCCP
Ծանոցում՝									
Annex II - տեսակը ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում									
IUCN – տեսակը ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Գարմիր ցուցակում KK CCCP – տեսակը ընդգրկված էր ԽՍՀՄ Գարմիր գրքում									
ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ									
Ղաար	Գարգր	Շնտանիքը	Տեսակը	Class	Order	Family	Species	Author	Գարգավիճակը
1	2	3	4	5	6	7	8	9	10
Ոսկրային ձկներ				Osteichth yes					
	Սաղմոնա- կերպեր				Salmoniformes				
		Սաղմոնայիններ				Salmonidae			
			Գետի կարմրախայտ				Salmo trutta trutta	Morpha Linnaeus 1758	VU A1cd
Երկկեն- ցաղներ				Amphibia					
	Պոչավորներ				Caudata				
		Սալամանդրներ				Salamandridae			
			Փոքրասիական տրիտոն				Ommatotriton ophryticus	Berthold 1846	CR B2ab
	Անպոչ երկ- կենցաղներ				Anura				
		Սխտորագորտեր				Pelobatidae			
			Սիրիական սխտորագորտ				Pelobates syriacus	Boettger 1889	VU B2ab (ii, iii):
			Արևելյան ճառագորտ				Hyla orientalis	Bedriaga 1890	VU B2 ab (ii, iii):
			Փոքրասիական ճառագորտ				Hyla savignyi	Audouin 1827	VU B2 ab (ii, iii):
Սողուններ				Reptilia					
	Կրիաներ				Testudines				
		Ցամաքային կրիաներ				Testudinidae			
			Միջերկրածո- վային կրիա				Testudo graece armeniaca	Testudo graece armeniaca Chk hikvadza & Bakradse, 1991	VU A2cd, B1a+2ab (iii)
	Սողեաներ				Sauria				
		Ազամաներ				Agamidae			

			Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ Կովկասյան ազամա			Persicus	Defilipi 1863	CR A2c; B2 ab (i, ii, iii)
						Paralaudakia caucasica	Eichwald 1831	VU B2 ab (ii, iii):
		Սցինկեր			Scincidae			
			Երկարատու սցինկ			Eumeces schneideri	Daudin 1802	VU B1ab(iii)+2ab(iii)
			ոսկեգույն մաքույա			Henemites septemtaeniatus	Reuss	VU B1ab(iii)+2ab(iii):
		Իսկական մողեսներ			Lacertidae			
			Անդրկովկասյան մողեսիկ			Eremias pleskei	Nikolgy 1905	CR B2ab (ii, iii)
			Դայի մողես			Darevskia dahli	Darevsky 1957	EN B1a+2a
			Ռոստոմբեկովի մողես			Darevskia rostombekovi	Darevsky 1957	EN B2ab (ii, iii)
	Թեփուկավորներ				Squamata			
		Լորտուներ			Colubridae	Opel		
			Կատված			Telescopus fallax	Feischmann 1831	VU B1ab (iii)
			Կապարագույն սահնոձ			Hemorrhois	Reuss 1834	VU B1ab (iii)
			Չիթագույն սահնոձ			Coluber najadum	Eichwald 1831	NT B1a+2a
			Սատունիի սևագլուխ ռինխոկալամուս			Rhynchocalamus melanocephalus satunin	Nikolsky 1899	VU B2ab (i, iii)
			Հայկական իժկամ Ռադդեի իժ			Montivipera raddei	Boettger 1890	VU B1a+ 2b (ii, iii)
Թռչուններ				Aves				
	Թիառտայիներ				Pelecaniformes			
		Չկնկուներ			Phalacrocoracidae			
			Մեծ ձկնկուլ			Phalacrocorax carbo	Linnaeus 1758	VU B1ab(iii)
			Փոքր ձկնկուլ			Phalacrocorax pygmeus	Pallas 1773	VU B1ab(iii)+2a
	Արագիլանմաններ				Ciconiiformes			
		Տառեղներ			Ardeida			
			Մոխրագույն տառեղ			Ardea cinerea	Linnaeus 1758	VU D1

			Շիկակարմիր տառեղ			Ardea purpureae	Linnaeus	DD
			Սպիտակ մեծ տառեղ			Ardea alba	Linnaeus 1766	VU D
			Սպիտակ փոքր տառեղ			Egretta garzetta	Linnaeus 1758	VU D1
			Եգիպտական տառեղ			Bubulcus ibis	Linnaeus 1758	VU D
			Փոքր ջրցուլ			Ixobrychus minutes	Linnaeus 1758	DD
	Սագանմաններ				Anseriformes			
		Բաղեր				Anatidae		
			Մոխրագույն սագ			Anser anser	Linnaeus 1758	VU D1
			Կոնչան բաղ			Anser platyrhynchos	Linnaeus 1758	VU D1
	Բազենմաններ				Falconiformes			
		ճուռակներ				Accipitridae		
			Մեծ ճուռակ			Buteo buteo	Linnaeus 1758	VU D1
			Տափաստանային ճուռակ			Buteo rufinus	Cretzschmar 1827	VU D1
			Թավշաոտ ճուռակ			Buteo lagopus	Pontoppidan	VU C2a(ii):
			Լորաճուռակ			Accipiter nisus	Linnaeus 1758	VU D1
			Ցախալորաորս			Accipiter gentilis	Linnaeus 1758	VU D1
			Եվրոպական ճնճղաճուռակ			Accipiter brevipes	Severtzoff 1858	VU D1
			Կրետակեր			Pernis apivorus	Linnaeus 1756	DD
			Տափաստանային մկնաճուռակ			Circus macrourus	S.G. Gmelin 1771	EN B1ab(iii)D1:
			Մարգագետնային մկնաճուռակ			Circus pygargus	Linnaeus 1758	VU D1:
			Դաշտային մկնաճուռակ			Circus cyaneus cyaneus	Linnaeus 1766	VU B1ab(iii); D1:
			Կարմիր ցին			Milvus milvus	Linnaeus 1708	EN B1a; D
			Սև ցին			Milvus migrans	Boddaert 1783	VU D1
			Քարարծիվ			Aquila chrysaetos	Linnaeus 1758	CR
			Գաճաճ արծիվ			Hieraetus pennatus	J.F. Gmelin 1788	VU D1
			Փոքր ենթարծիվ			Aquila pomarina	C.L. Brehm 1931	EN
			Մեծ ենթարծիվ			Aquila clanga	Pallas 1811	EN
			Տափաստանային արծիվ			Aquila nipalensis	Hodgson 1833	VU C2a(i);
			Սպիտակապոչ			Haliaeetus albicilla	Linnaeus 1758	EN B1a; D

			արծիվ							
			Օձակեր արծիվ					Circaetus gallicus	J.F. Gmelin 1788	VU D1
			Գերեզման-արծիվ					Aquila heliaca	Savigny 1809	VU D1
			Գառնանգ (նորուքավոր անգղ)					Gypaetus barbatus	Linnaeus 1758	EN D
			Գիշանգո					Neophron percnopterus	Linnaeus 1783	EN D
			Սպիտակա-գլուխ անգո					Gyps fulvus	Hablizl	EN D 1
			Սև անգո					Aegipus monachus	Linnaeus 1766	EN D
		Բազեներ					Falconidae			
			Տափաստանային հողմավար բազե					Falco naumanni	Fleischer 1818	VU A2bce
			Մովրական հողմավար բազե					Falco tinnunculus	Linnaeus 1758	DD
			Կարմրատ բազե					Falco vespertinus	Linnaeus 1766	VU B1ab(iii)+2ab(iii); D1
			Աղավնաբազե					Falco columbarius	Linnaeus 1758	DD
			Արտոկտաբազե					Falco subbuteo	Linnaeus 1758	
			Միջերկրածովային բազե					Falco biarmicus	Temminck 1825	DD
			Բալդրան					Falco cherrug	J.E. Gray 1834	EN
			Սապսան					Falco peregrinus	Tunstall 1771	VU D1
	Հավանմաններ					Galliformes				
		Մարեհավեր					Tetraonidae			
			Կովկասյան մարեհավ					Tetrao mlokosiewiczi	Taczanowski 1875	EN, D1
		Փասիաններ					Phasianidae			
			Քարակաթավ					Alectoris chukar	Gray 1830	VU D1
			Մոխրագույն կաթավ					Perdix perdix	Linnaeus 1758	VU D1
			Վայրի հնդկահավ (Ուլար)					Tetraogallus caspius	S.G. Gmelin 1784	EN
			Թուրաջ					Francolinus francolinus	Linnaeus 1766	DD
			Անդրկովկասյան փասիան					Phasianus colchicus	Linnaeus 1758	DD
	Կռունկանմաններ					Gruiformes				
		Իսկական կռունկներ					Gruidae			
			Գեղանի կռունկ					Anthropoides virgo	Linnaeus 1758	VU
			Մոխրագույն					Grus grus	Linnaeus 1758	EN D

			կռունկ						
		Ջրահովվիկներ				Rallidae			
			Սուլթանական հավ				Porphyrio porphyrio	Linnaeus 1758	DD
		Արոսներ				Otididae			
			Փոքր արոս				Tetrax tetrax	Linnaeus 1758	VU B2ab(iii); Ca(i); D1
	Քարադրանմաններ				Charadriiformes				
		Կտցար- կաչաղակներ				Haematopodidae			
			Կտցար- կաչաղակ				Haematopus ostralegus	Linnaeus 1758	VU B1ab(iii)
		Քարադրներ				Charadriidae			
			Ճախրուկ				Vonellus gregaria	Pallas 1771	EN B1a+B2a; Ca(i); D
		Մորակտցարներ				Scolopacidae			
			Անտառակտցար				Scolopax rusticola	Linnaeus 1758	VU A2b
			Մորակտցար				Gallinago gallinago	Linnaeus 1758	DD
			Կրկնակտցար				Gallinago media	Latham 1787	VU B1ab(iii)
	Դռնանմաններ				Pterocliiformes				
		Դռններ				Pteroclididae			
			Սևափոր դռն				Pterocles orientalis	Linnaeus 1758	VU B1ab(iii) D1
	Բվանմաններ				Strigiformes				
		Բվեր				Strigidae			
			Բվեճ				Bubo bubo	Linnaeus 1758	VU B1a; C2a(i); D1
			Թալշառո բու				Aegolius funereus	Linnaeus 1758	VU D1
			Անտառաբու				Strix aluco	Linnaeus 1758	VU D1
			Եվրոպական բվիկ				Otus scops	Linnaeus 1758	DD
			Ականջավոր բու				Asio otus	Linnaeus 1758	DD
			Ճահճային բու				Asio flammeus	Pontoppidan 1763	DD
	Ներկարարանմաններ				Coraciiformes				
		Մեղվակերներ				Meropidae			
			Կանաչ մեղվակեր				Merops persicus	Pallas 1773	VU B1ab(iii)+2ab(iii)
		Ներկարարներ				Coraciidae			
			Ներկարար				Coracias garrulus	Linnaeus 1758	VU B1ab(iii)
	Փայտփորանմաններ				Piciformes				
		Փայտփորներ				Picidae			
			Սև փայտփոր				Dryocopus martius	Linnaeus 1758	VU D1
			Կանաչ				Picus viridis	Linnaeus 1758	VU D1

	Ճնդուկանմաններ		փայտփոր		Passeriformes				
		Խաղտոտիկներ				Motacillidae			
			Դեղնագլուխ խաղտոտիկ			Motacilla citreola	Pallas 1776		VU D1
		Շամփրուկներ				Laniidae			
			Կարմրակատար շամփրուկ			Lanius senator	Linnaeus 1758		VU B1ab(iii)+2ab(iii)
		Կեռնեխներ				Turdidae			
			Սպիտակափող սոխակ			Irania gutturalis	Guerin 1843		DD
			Շիկապոչ քարաթռչնակ			Oenanthe xanthopyrna	De Filippi 1863		- EN B1a+2a; D: 91.
			Հարավային սոխակ			Luscinia megarhynchos	Brehm 1831		DD
			Կապտափող սոխակ			Luscinia svecica	Linnaeus 1758		DD
		Ճանճորսներ				Muscicapidae			
			Կիսասպիտակավիզ ճանճորս			Ficedula semitorquata	Homeyer 1885		DD
			Խայտաբղետ ճանճորս			Ficedula hypoleuca	Pallas 1764		DD
		Երաշտահավեր				Paridae			
			Միջերկրածովային երաշտահավ			Pocile lugubris	Temminck 1820		VU B1ab(iii)
			Բեղավոր երաշտահավ			Panurus biarmicus	Linnaeus 1758		DD
			Սև երաշտահավ			Periparus ater	Linnaeus 1758		DD
		Սիտեղներ				Sittidae			
			Մեծ ժայռային սիտեղ			Sitta tephronota	Sharpe 1872		VU B1ab(iii)+2ab(iii)
		Դրախտապաններ				Emberizidae			
			Ժայռային դրախտապան			Emberiza buchanani	Blyth 1844		VU B1 ab(iii)+2ab(ii)
		Սերինտսներ				Fringillidae			
			Անապատային խաձկտիկ			Bucanetesgithaginea	Lichtenstein 1823		DD
			Մոնղոլական խաձկտիկ			Bucanetesmongolica	Swinhoe 1870		DD
			Խաչկտու			Loxia curvirostra	Linnaeus 1758		DD
		Ճնդուկներ				Ploceidae			
			Իսպանական ճնդուկ			Passer hispaniolensis	Temminck 1820		VU B1ab(iii)+2ab(iii)
		Ճայեր				Corvidae			
			Ալպիական ճայ			Pyrrhocorax	Linnaeus 1766		EN D

							graculus		
Կաթնասուններ				Mammals					
					Erinaceomorpha				
		Ոգնիակերպեր				Erinaceidae			
			Լայնականջ ոգնի			Erinaceus (Hemichinus) auritus	Gmelin 1770		EN B1ab(iii)+2ab(iii)
	Միջատակերներ			Insectivora					
		Գետնավորներ				Soricidae			
			Շեկովնիկովի Կուտորա			Neomys teres	Miller 1908		EN B1a+2a
			Էթռուսական			Suncus etruscus	Savi 1822		VU B2a (ii)
	Չեղջերակերներ			Chiroptera					
		Պայտաքթայիններ				Rhinolophidae			
			Հարավային պայտաքթ			Rhinolophus euryale	Blasius 1853		EN B1a+2a:
			Մեհելի պայտաքթ չղջիկ			Rhinolophus mehelyi	Matschie 1901		VU B1a+2ab(iii):
			Բլագիի պայտաքթ			Rhinolophus blasii	Peters 1866		EN B1a+2a
			Փոքր պայտաքթ			Rhinolophus hipposideros	Borkhausen 1797		VU B2a (ii)
			Մեծ պայտաքթ			Rhinolophus Ferrumequinum	Schreber 1774		VU B2a (ii)
		Հարթաքթայիններ				Vespertilionidae			
			Սովորական երկարաթև չղջիկ			Miniopterus schreibersi	Kuhl 1819		VU B1ab(iii)+2ab(iii)
			Գունատ երկարաթև			Miniopterus pallidus	Thomas 1907		VU B1ab(iii)+2ab(iii)
			Բեխշտեյնի գիշերաչղջիկ			Myotis bechsteinii	Kuhl 1818		VU B1a
			Սրականջ գիշերաչղջիկ			Myotis Blythii	Tomes 1857		VU B1a
			Եռագույն գիշերաչղջիկ			Myotis emarginatus	Geoffroy 1806		VU B1a
			Բեղավոր գիշերաչղջիկ			Myotis mystacinus	Kuhl 1817		UV
			Նատերերի գիշերաչղջիկ			Myotis Nattereri	Kuhl 1817		UV
			Դաուբենտոնի գիշերաչղջիկ			Myotis Daubentoni	Kuhl 1817		DD
			Շիկակարմիր իրիկնաչղջիկ			Nyctalus noctula	Schreber 1775		DD

			Փոքր իրիկաչղջիկ				Nyctalus leisleri	Kuhl 1817	DD
			Անապատային մաշկեղ				Eptesicus bottae	Peters 1869	VU B1a
			Գաճաճ փոքրաչղջիկ				Pipistrellus pygmaeus	Leach 1825	UV
			Եվրոպական լայնականջ				Barbastella Barbastellus	Schreber 1774	VU B1ab(iii)
			Կասպիական լայնականջ չղջիկ				Barbastella caspica	Gretzschmar 1830	VU B1ab(iii)
			Գորշ ականջեղ				Plecotus auritus	Linnaeus 1758	UV B1a
			Լեռնային ականջեղ				Plecotus macrobularis	Kuzyakin 1965	UV B1a
		Բուվողայիններ					Molossidae		
			Ծալքաշուրթ լայնականջ չղջիկ				Tadarida teniotis	Rafinesque 1819	DD
	Կրծողներ				Rodenta				
		Վայրենակերպեր					Hystricidae		
			Հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ				Histrix indica	Kerr 1792	UV B1a
		Ավազամկնանմաններ					Gerbillidae		
			Պարսկական ավազամուկ				Meriones persicus	Blanford 1875	DD
		Սկյուռանմաններ					Sciuridae		
			Պարսկական սկյուռ				Sciurus anomalus	Gmelin 1778	DD
			Փոքրասիական գետնասկյուռ				Spermophilus xanthopyrmnus	Bennet 1835	EN B2ab (ii, iii, iv)
		Ճագարամկնանմաններ					Allactagidae		
			Փոքր ճագարամուկ				Allactaga elater	Lichtenstein 1825	EN B1ab (ii, iii, iv):
		Կույր մկներ					Spalacidae		
			Ներինգի կուրամուկ				Nannospalax nehringi	Satunin 1898	EN B1ab (ii, iii, iv)
	Նապաստակակերպներ				Lagomorpha				
		Նապաստակներ					Leporida		
			Գորշ նապաստակ				Lepus europaeus	Pallas 1778	UV B1a
	Գիշատիչներ				Carnivora				
		Արջեր					Ursidae		
			Գորշ արջ				Ursus arctos	Linnaeus 1758	VU B1 b(iii)
		Կաքիսներ					Mustelidae		

			Խայտաքիս				Vormela peregusna	Guldenstaedt 1770	VU A2c+B1 b(iii)
			Ջրասամույր				Lutra lutra	Linnaeus 1758	EN D
			Քարակզաքիս				Martes foina	Erxleben 1777	DD
			Աքիս				Mustela nivalis	Linnaeus 1766	DD
		Շնագզիներ				Canidae			
			Սովորական աղվես				Vulpes vulpes	Linnaeus 1758	
			Անդրկովկասյան աղվես				Vulpes vulpesalpheraky	Satunin 1906	UV
		Կատվագզիներ				Felidae			
			Անտառակատու				Felis silvestris	Schrebe 1777	VU B1ab(iii)
			Եղեգնակատու				Felis chaus	Schreber 1777	VU B1ab(iii)
			Սովորական լուսան				Lynx lynx	Linnaeus 1758	VU
			Ընձառյուծ				Panthera pardus	Linnaeus 1758	Linnaeus
			Սանուկ				Otocolobus manul	Pallas 1776	RE
		Բորենիներ				Hyenidae			
			Բորենի				Hyaena hyaena	Linnaeus 1758	RE
	Ջուլգասմբակավորներ				Artiodactila				
		Սնամեջ եղջուրավորներ				Bovidae			
			Բեզուարյան այծ				Capra aegagrus	Erxleben 1777	VU C2a(i)
			Հայկական մուֆլոն				Ovis orientalis gmelinii	Blyth 1841	EN D
		Եղջերուներ				Cervidae			
			Այծյամ				Capreolus capreolus	Linnaeus 1758	VU C2a(i)
			Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ				Cervus elaphus maral	Gray 1840	CR D

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2022թ.

N 521-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 104 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ն ք ն շ ու մ է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի «Կենդանական և բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը լիազորված մարմնի իրավասություններ վերապահելու մասին» N 104 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ» բառերով:

2) նախաբանում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել «օրենքի» բառով:

3) 1-ին կետում՝

ա. «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. «շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը» բառերը փոխարինել «բնապահպանության կոմիտեին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2022թ.

N 524-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 884-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 10-ի «Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» N 884-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«11. Նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝ աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման www.shanghairanking.com կամ www.timeshighereducation.com կայքերի տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի, ասպիրանտուրայի կամ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը՝ առանց Արցախի Հանրապետության պետական բյուջեից գումարի փոխանցման ընդունման պահից և ուսումնառության ընթացքում: Նշանակալի նվաճում է համարվում նաև քաղաքացու՝ օտարերկրյա պետությունների անվճար կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելը տվյալ պետության կողմից օտարերկրյա քաղաքացիներին անվճար տրամադրվող քվոտաների հաշվին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2022 թվականի մայիսի 11-ի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՍԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 13-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 34-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«34. Արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրվում է՝

1) 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածի համար՝ մինչև 5 մեգավատտ (ներառյալ) տեղակայվող (տեղակայված) հզորությամբ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության համար.

2) սույն կարգի 37-րդ կետով նախատեսված դեպքում.

3) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ մինչև 1 մեգավատտ (ներառյալ) տեղակայվող (տեղակայված) հզորությամբ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության համար:».

2) 35-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«35. Սույն կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրվում է առանց գումարային հզորության սահմանափակման, իսկ 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա չի տրամադրվում և Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ սահմանված մեթոդիկայի համաձայն սակագին չի սահմանվում, եթե լիցենզիայի տրամադրման արդյունքում այդ կայանների գումարային հզորությունը գերազանցում է 10 մեգավատտը:».

3) 38-րդ կետում «Մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)» բառերը փոխարինել «Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)» բառերով.

4) 39-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«39. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու մեկից ավելի հայտերի ներկայացման դեպքում, որոնց բավարարումը կհանգեցնի սույն կարգի 35-րդ կետով սահմանված գումարային հզորության սահմանաչափի գերազանցման, հայտերը ուսումնասիրվում, քննարկվում են ըստ ներկայացման հաջորդականության և սահմանված սահմանաչափի շրջանակում»:

5) N 2 հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում և 3-րդ կետի 3-րդ ենթակետում «հայտարարություն մամուլում՝ Արցախի Հանրապետությունում ամենամեծ տպաքանակ ունեցող թերթում» բառերը փոխարինել «հայտարարություն Արցախի Հանրապետության զանգվածային լրատվության միջոցներով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2022 թվականի մայիսի 11
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

2022 թվականի մայիսի 11-ի

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 14-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 14Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 18-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 1-ին կետի՝

1) 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) արևային էլեկտրակայաններ, որոնք ունեն

ա) մինչև 5 մեգավատտ (ներառյալ) տեղակայված հզորություն, և այդ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրամադրվել են 2019 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ժամանակահատվածում.

բ) մինչև 1 մեգավատտ (ներառյալ) տեղակայված հզորություն, և այդ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրամադրվել են համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին.».

2) 5-րդ ենթակետի «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)» և 6-րդ ենթակետի «մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2022 թվականի մայիսի 11

ք. Ստեփանակերտ

ՀՐԱՄԱՆ

«21» ապրիլի 2022թ.

N 84-Ս

ք. Ստեփանակերտ

**«ԼԻԼՄԵՆ ԾԵՆՏՐ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԼԻԼՄԵՆ ԾԵՆՏՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Բաղրամյան 9/2) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա տրամադրելու վերաբերյալ հայտը բավարարել և տրամադրել **գինեկոլոգիական, մանկաբուժական, ընդհանուր վիրաբուժական, ուրոլոգիական, սրտաբանական, նյարդաբանական, ներզատաբանական, վերականգնողական (բուժական մերսում), ուռուցքաբանական (վիրաբուժական), ալերգոլոգիական, գաստրոէնտերոլոգիական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վնասվածքաբանական, լաբորատոր ախտորոշիչ (կլինիկական, կենսաաքիմիական, մանրէաբանական, իմունաբանական), անոթային վիրաբուժական** գործունեություններ իրականացնելու լիցենզիա, բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ **արտահիվանդանոցային:**

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ. Հովհաննիսյանին՝ ապահովել

1) տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Մ.ՀԱՅՐԻՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

06 մայիսի 2022թ.

ՆՀ-93-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՔԻԼՆԵՐՈՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 6-ի N 391-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **Ֆիզիկական անձ Վրեժ Մարտինի Թովմասյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00795 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

2) **անհատ ձեռնարկատեր Արթուր Բորայի Բարսեղյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00796 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/1469/02/21
Քաղաքացիական գործ ԸԻԴ/1469/02/21
Նախագահող դատավոր՝ Հ. Գրիգորյան
Դատավորներ՝ Լ. Ավանեսյան
Մ. Ավանեսյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

28 ապրիլի 2022թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր	Գ. Գրիգորյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Ի. Կարապետյանի
	Ա. Աբրահամյանի
	Հ. Աբրահամյանի
	Կ. Ղարայանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Սերգեյ Արթուրի Բարսեղյանի ընդդեմ Ելենա Երվանդի Պողոսյանի՝ առանց իր համաձայնության երեխաներին այլ երկիր տեղափոխելն արգելելու և երեխաների հետ տեսակցության վայրը որոշելու պահանջների մասին քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Սերգեյ Արթուրի Բարսեղյանը 2021 թվականի օգոստոսի 23-ին հայց է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) ընդդեմ Ելենա Երվանդի Պողոսյանի՝ առանց իր համաձայնության երեխաներին այլ երկիր տեղափոխելն արգելելու և երեխաների հետ տեսակցության վայրը որոշելու մասին պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ օրենքով սահմանված կարգով ու չափով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց հայցադիմումին կցված չլինելու պատճառաբանությամբ, միաժամանակ արձանագրելով թույլ տված թերությունը վերացնելուց հետո եռօրյա ժամկետում հայցադիմումը կրկին ներկայացնելու հնարավորության մասին:

Սերգեյ Արթուրի Բարսեղյանը 2021 թվականի օգոստոսի 27-ին կրկին հայց է ներկայացրել Առաջին ատյանի դատարան ընդդեմ Ելենա Երվանդի Պողոսյանի՝ նույն պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ կրկին ներկայացված հայցադիմումը ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ Ստեփանակերտի քաղաքային համայնքը քաղաքացիական գործով ներգրավվել է որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ քաղաքացիական գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատական քննության 2021 թվականի դեկտեմբերի 2-ին:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր Ն.Առաքելյան) 2021 թվականի դեկտեմբերի 17-ի վճռով հայցը՝ առանց հայցվորի համաձայնության երեխաներին այլ երկիր տեղափոխելն արգելելու պահանջի մասով, մերժվել է, իսկ երեխաների հետ տեսակցության վայրը որոշելու հայցապահանջի մասով գործի վարույթը կարճվել՝ հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով:

Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ վճռի դեմ 2021 թվականի դեկտեմբերի 29-ին վերաքննիչ բողոք է բերել հայցվոր Ս.Բարսեղյանը՝ վճիռը բեկանելու և փոփոխելու, հայցը (առանց իր համաձայնության երեխաներին այլ երկիր տեղափոխելն արգելելու պահանջի մասով) բավարարելու մասին խնդրանքով:

ԱՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2022 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է. հայցը բավարարվել: Որոշվել է Ելենա Երվանդի Պողոսյանին արգելել առանց Սերգեյ Արթուրի Բարսեղյանի թույլտվության Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս հանել իրենց երեխաներ՝ Յուլյա Սերգեյ Բարսեղյանին (ծնված 2013թ. սեպտեմբերի 9-ին) և Միլանա Սերգեյ Բարսեղյանին (ծնված 2017թ. հունվարի 25-ին), բացառությամբ այն դեպքերի, երբ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ հայր ծնողի համաձայնությունը ստանալն անհնարին է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2022 թվականի մարտի 25-ին պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքը և քաղաքացիական գործը Գերագույն դատարանի դատական կազմին են հանձնվել 2022 թվականի ապրիլի 1-ին:

Վճռաբեկ բողոքի գրավոր պատասխան է ներկայացրել հայցվոր Ս. Բարսեղյանը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանն առերևույթ թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտումներ և ըստ էության պարտավորեցրել անձին կատարելու մի գործողություն, որի կատարման պարտականություն սահմանված չէ օրենքով: Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 8-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ և 229-րդ հոդվածների պահանջները, անհիմն հղում կատարել նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Մեջբերելով հայցային դիմումից հատված, բողոքաբերը նշել է, որ հայցի փաստական հիմքում հայցվորը դրել է այն պատճառաբանությունները, որ դատարանի վճռով երեխաների տեսակցություն է որոշված և իր իրավունքները նախատեսված են ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 42-րդ, 49-րդ, 51-54-րդ հոդվածներով:

Ըստ բողոքաբերի՝ նախ պատասխանողը որևէ տեղ մեկնելու մտադրություն երբևէ չի ունեցել ու ներկա պահին չունի, հայցվորը վերաքննիչ

բողոքում չի նշել մեկ փաստ կամ բերել հիմնավորում, թե Առաջին ատյանի դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմի խախտում է թույլ տվել, որը հանգեցրել է գործի սխալ լուծմանը: Վերաքննիչ դատարանը որոշման մեջ շարադրել է «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ, ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 49-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածների բովանդակությունը, կողմերի ամուսնալուծության և երեխաների տեսակցությունը որոշված լինելու հանգամանքները, անդրադարձ է կատարել «երեխայի շահ» հասկացությանը, սակայն որոշումից պարզ չէ, թե, ներկայացված հայցի հիմքի ու առարկայի հաշվառմամբ, ինչ կապ ունեն այդ նշվածները պատասխանողի վրա պարտականություն դնելու հետ:

Բողոքաբերը գտել է, որ եթե օրենսդիրն ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումը նախատեսել է օրենքով, ապա կոնկրետ սահմանափակման հիմքերը և կարգը պետք է կարգավորվեն օրենքով, այլ ոչ թե՝ դատարանի հայեցողական որոշմամբ: Ըստ բողոքի՝ եթե Սահմանադրությամբ և քրեական օրենսդրությամբ կոնկրետ սահմանված են սահմանափակման հիմքերը և կարգը, իսկ քաղաքացիական պարտավորությունների մասով՝ ոչ, ապա դա չի՝ ենթադրում, որ այս դեպքում անձի իրավունքները և ազատություններն անհիմն սահմանափակվել են: Գերագույն դատարանի առջև բարձրացվող այս հարցի կապակցությամբ արտահայտվելիք դիրքորոշումը կարող է նպաստել իրավունքի սահմանափակման կամ ամրագրման տեսանկյունից կանխատեսելի պրակտիկա ձևավորելուն:

Շարադրելով ԱՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտով սահմանափակվում է պատասխանողի և իր խնամքի տակ գտնվող երեխաների ազատ տեղաշարժվելու իրավունքը, քանի որ այդ ակտով պատասխանողը պարտավորվում է սահմանը հատելու ցանկության դեպքում ստանալ երեխաներից առանձին ապրող ծնողի համաձայնությունը: Բողոքաբերն այն համարում է ուղիղ միջամտություն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին:

Ըստ բողոքաբերի՝ դատական պրակտիկայում չի եղել նման դեպք կամ օրենքով նախատեսված չէ, որ եթե անձն ունի երեխաներին տեսակցելու իրավունք կամ երեխաներին ապրուստավճար վճարելու պարտականություն, ուրեմն չի կարող անարգել հատել սահմանը կամ այլ դեպքում թույլտվություն ստանալու պարտականություն կրել:

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները սահմանված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով: Ներկայացված պահանջը չի բխում նշված հոդվածի պահանջներից, իսկ անձի վրա գործողություն կատարելու պարտականություն դնելու մասին դատական ակտն էլ չի բխում ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի պահանջներից, քանի որ պարտավորության ծագման հիմք առկա չլինելու պայմաններում դատարանը թեև արձանագրել է, որ այլ երկիր մեկնելը չի կարող հանգեցնել մյուս ծնողի իրավունքների խախտմանը, այդուհանդերձ թույլտվություն հայցելու պարտականություն է սահմանել:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի շրջանակներից (այդ թվում հայցի շրջանակներից), գտել է, որ վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման, որոշման հիմքում դնելով նաև սխալ մեկնաբանված ու կիրառման ոչ ենթակա Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ համակարգային կապի մեջ կիրառելի դիտարկված այն կարգավորումը, իբր թե դատարանները կոնկրետ գործի քննության ժամանակ՝ էլնելով երեխայի շահերի ապահովման

սկզբունքից, կարող են նախապատվությունը տալ երկրի սահմաններից դուրս մեկնելու երեխայի իրավունքին: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը գործով քննարկման ենթակա փաստերի շրջանակներից դուրս հետևություններ է արել, քանի որ հասկանալի չէ, թե որ երկիր է մեկնում երեխան, որ դատարանները երեխայի շահերի գնահատմամբ պետք է անդրադառնան որևէ երկիր մեկնելու նախապատվությանը:

Բողոքում փաստվել է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հայր ծնողի կողմից դատարան դիմելը վկայում է արտերկիր մեկնելու հնարավորության վերաբերյալ ծնողների միջև վեճի առկայության մասին, որը ենթակա է լուծման բացառապես դատարանի կողմից: Դատարանը պարտավոր է քննարկել որոշակի տևողությամբ կոնկրետ ուղևորությունների հնարավորությունը՝ կոնկրետ պետություններ և ակնկալվող ժամկետներում: Դա նաև կարող է կարևոր կանխարգելիչ դեր ունենալ՝ ստիպելով ծնողին, ով մտադիր է սահմանափակել մյուս ծնողի հետ երեխայի արտասահման մեկնելու հնարավորությունը, խուսափել իր իրավունքի չարաշահումից, այն իրացնելով միայն խիստ անհրաժեշտության դեպքում:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի նշված արձանագրումներն անհասկանալի են, քանի որ, ընդհանուր առմամբ, որևէ միտք չեն արտահայտում, առաջին պարբերությունը մյուս պարբերությունների տրամաբանական շարունակությունը չէ ու չի կարգավորում վեճ ասվածը, իսկ այս դեպքում այդպիսի վեճ անգամ չկա: Եվ քանի որ օրենսդրությունից էլ բխում է, որ վեճը պետք է լինի ռեալ, անհարկի դատական հայցեր չպետք է ներկայացվեն դատարան, ապա այս համատեքստում էլ դատարանները պետք է առաջնորդվեն Գերագույն դատարանի մի շարք որոշումներում արտահայտած դիրքորոշումներով և գործեին իրենց լիազորությունների շրջանակներում, թույլ չտային հայցի և բողոքի սահմանազանցում: Ապագայով մտահոգված դատարան դիմելը չի նշանակում, որ առկա է ռեալ վեճ: Եթե հայցվորը համարել է, որ առկա է վեճ, ինչպես նաև երեխաների սահման հատելու փաստը կամ դրա վերաբերյալ նրանց մոր ցանկությունը, ապա մեջբերվածի համատեքստում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկեր որոշակի տևողությամբ կոնկրետ ուղևորության հնարավորությունը կոնկրետ պետություններ և կոնկրետ ժամկետներում:

Բողոքաբերը նշել է, որ անհասկանալի է նաև, թե ինչ է նկատի առել Վերաքննիչ դատարանը, նշելով, թե նկարագրված դատական ընթացակարգի տարածումն այն ծնողի նկատմամբ, ով նախկինում սահմանված կարգով անհամաձայնություն է հայտնել երեխայի արտասահման մեկնելու վերաբերյալ, կոչված է հավասարեցնելու նրա հետ իրավունքներում մյուս ծնողին, և այդպիսով ուղղված է իրավունքի չարաշահման անթույլատրելիության և ձևական հավասարության սկզբունքների ապահովմանը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը չի տվել այն հարցի պատասխանը, որ եթե արտակարգ իրավիճակով կամ երեխաների առողջության հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն առաջանա անհապաղ հատել ՀՀ սահմանը, իսկ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված անհնար լինի ստանալ հայր ծնողի համաձայնությունը, ապա տվյալ դեպքում մայր ծնողն ինչպես պետք է ապահովի երեխաների շահերը:

Այսպիսով, բողոքաբերը բողոքարկված դատական ակտը համարում է թերի, չպատճառաբանված, կամայական, անձնական ազատություններին միջամտող, ապօրինի, անտրամաբանական ու անհեռանկար, իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին կատարած հղումն անհիմն:

Շարադրելով ԱՀ դատական օրենսգրքի 26-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի բովանդակությունը, բողոքաբերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ

հողվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Մասնավորապես, միայն Գերագույն դատարանի արտահայտած դիրքորոշումը կարող է նպաստել սահմանադրական իրավունքի սահմանափակման վերաբերյալ կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելուն, նման հարցերում դատարանի լիազորությունների բացահայտմանը (քանի որ նշված ոլորտը կարգավորող օրենքը բացակայում է) և նշված վեճը դատարանի քննության ենթակա լինելու կամ չլինելու հարցի լուծմանը: Առերևույթ խախտվել և սահմանափակվել են անձի՝ ԱՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, ուստի կայացված դատական ակտն էլ իր հերթին չի բխում՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածների պահանջներից:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բողոքարկվող մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի որոշումը և հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքի պատասխանում հայցվորը խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը և Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ Վերաքննիչ դատարանն ուշադրության է արժանացրել վեճին՝ վերաբերող իրական հանգամանքները. թե՛ դատական նիստերի ընթացքում բարձրացված հարցերը և թե՛ հայցի օրինական հիմքերը:

Շարադրելով «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի, Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 2-րդ մասի, ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ, 42-րդ հոդվածների, 49-րդ, 51-րդ հոդվածների 1-ին մասերի, 53-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ, 121-րդ հոդվածների բովանդակությունը, հատվածներ մեջբերելով վճռաբեկ բողոքից, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերից և դրանք վերլուծելով, վճռաբեկ բողոքի պատասխան բերողը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ ճիշտ է ամրագրվել, որ առանց իր թույլտվության երեխաներին այլ երկիր տեղափոխելն արգելվում է՝ ելնելով երեխաների լավագույն շահերից, ինչը նպաստելու է երեխաների՝ իրենց հորը ճանաչելու, նրա հոգատարությանն արժանանալու, նրանից դաստիարակություն ստանալու իրավունքներին, ինչպես նաև երաշխավորելու իրենց շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իրենց մարդկային արժանապատվությունը հարգելու, ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար հայր ծնողից անհրաժեշտ կենսապայմաններ ստանալու իրավունքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կողմերը՝ Սերգեյ Արթուրի Բարսեղյանը և Ելենա Երվանդի Պողոսյանը ամուսնացել են 2013թ. դեկտեմբերի 20-ին, ամուսնալուծվել՝ 2018թ. օգոստոսի 14-ին (գ.թ.23, 24):

2) Կողմերն ունեն երկու երեխա՝ Յուլյա Սերգեյ Բարսեղյան՝ ծնված 09.09.2013թ., և Միլանա Սերգեյ Բարսեղյան՝ ծնված 25.01.2017թ. (գ.թ.25, 26):

3) Երեխաները բնակվում են իրենց մոր՝ Ելենա Պողոսյանի հետ:

4) Առաջին ատյանի դատարանի 2019թ. նոյեմբերի 29-ի վճռով բավարարվել է Ս.Բարսեղյանի հայցն ընդդեմ Ե.Պողոսյանի և երեխաների հետ տեսակցելու համար սահմանվել ժամկետ՝ յուրաքանչյուր շաբաթվա

չորեքշաբթի օրը՝ ժամը 19:00-ից մինչև 21:00-ն, և շաբաթ օրը՝ ժամը 16:00-ից մինչև 20:00-ն (գ.թ.32-34):

5) ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերի հրամանատար Ա.Սարալյանի կողմից Սերգեյ Բարսեղյանին հասցեագրված 2021թ. օգոստոսի 12-ի N 5/1756 գրության համաձայն՝ մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիների ելքը Հայաստանի Հանրապետությունից մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի ուղեկցությամբ կարող է սահմանափակվել միայն դատարանի համապատասխան որոշման հիման վրա (գ.թ.64):

6) Գործով որևէ ապացույց չի ներկայացվել պատասխանողի՝ երեխաների հետ այլ երկիր մեկնելու մտադրության վերաբերյալ:

7) Գործով որևէ ապացույց ձեռք չի բերվել պատասխանողի և երեխաների իրավունքների սահմանափակման անհրաժեշտության վերաբերյալ:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի կողմից վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ երեխային արտերկիր տեղափոխելու համար առանձին ապրող ծնողի կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, գտնում է, որ բողոքը պետք է բավարարել. բողոքարկված որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի վճռին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԱՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն)՝ «Ընտանիքի պաշտպանությունը» վերտառությամբ 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Նշված նորմը գետեղված է Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ, առաջին գլխում:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ինչպես հետևում է վերը նշված իրավանդումի բովանդակությունից՝ նշված նորմը գետեղվելով Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ գլխում, կարևորվում է մայրության և մանկության պաշտպանությունը որպես պետության հիմնական խնդիրներից մեկը:

Սահմանադրությունը, ի թիվս այլնի, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների շարքին է դասել ծնողների իրավունքները և պարտականությունները, երեխայի իրավունքները, ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Այսպես՝ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 1. Ծնողները իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին: 2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:

Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք...:

Սահմանադրության՝ «Ազատ տեղաշարժվելու իրավունքը» վերտառությամբ 40-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արցախի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Արցախի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի և Արցախի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Արցախի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Արցախի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:»:

Ընդ որում, համաձայն Սահմանադրության 76-րդ հոդվածի՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Սահմանադրության 36-րդ, 37-րդ հոդվածներում նշված իրավունքները չեն կարող սահմանափակվել, իսկ 40-րդ հոդվածում նշված իրավունքները կարող են ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում, ինչպես նաև նույն հոդվածի 4-րդ մասով նշված հիմքերով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանի առջև բարձրացվել են հետևյալ հարցերը. 1) ինչպես են հարաբերակցվում իրար հետ Սահմանադրությամբ ամրագրված (երաշխավորված) ծնողական և ազատ տեղաշարժվելու իրավունքները, 2) արդյոք երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի առանց հիմնավոր (լուրջ) պատճառի (վկայակոչելով երեխայի նկատմամբ իր իրավունքները, առաջ քաշելով ծնողական իրավունքներից օգտվելու փաստարկը) դիմել դատարան՝ իր երեխաների՝ մյուս ծնողի հետ արտերկիր մեկնելն արգելելու պահանջով:

Գերագույն դատարանը փաստում է, որ հայրենական հիմնական իրավական ակտը (բացի Սահմանադրությունից), որը կարգավորում է երեխաների և ծնողների իրավունքները և պարտականությունները, ծնողների և երեխաների միջև հարաբերությունները, ԼՂՀ ընտանեկան օրենսգիրքն է:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: ...»: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար

համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ... (այսուհետ՝ երեխայի լավագույն շահեր):

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է վնասել երեխայի շահերին:...

Երեխայի իրավունքների, «երեխայի լավագույն շահ» հասկացության բացահայտմանը Գերագույն դատարանն անդրադարձել է իր նախկինում ընդունած որոշումներում, մասնավորապես՝ ԸԲԴ/2695/02/18, ԸԲԴ/3866/02/19 քաղաքացիական գործերով համապատասխանաբար 2019 թվականի հունիսի 26-ի և 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումներում:

Նշված որոշումներում, վերլուծելով վերը նշված իրավական նորմերը, Գերագույն դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրության և օրենքի ուժով յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, հոգևոր, լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք և ներդաշնակ զարգացման և կրթության համար: Ծնողներն այլ անձանց հանդեպ ունեն նախապատվության իրավունք իրենց երեխաների խնամքը և դաստիարակությունը ապահովելուն:

Օրենսդիրը, միաժամանակ, սահմանել է, որ ծնողները, որոնք իրենց ծնողական իրավունքներն իրականացնում են ի վնաս երեխայի շահերի, կարող են դատարանի վճռով զրկվել ծնողական իրավունքներից:

Հարկ է նշել, որ «երեխայի լավագույն շահ»-ը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում բոլոր պայմանները հաշվի առնելը:

«Երեխայի շահեր» հասկացությունը և դրա բնորոշ հատկանիշների բովանդակությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից վերը նշված հարցին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով (Ց.ընդդեմ Ֆինլանդիայի գործով 2006թ. մայիսի 9-ի վճիռը, Օլսոն ընդդեմ Շվեդիայի գործով 1988թ. մարտի 24-ի վճիռը):

«Երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը» բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի»:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրը սահմանել է նաև ծնողների ամուսնության դադարեցման, ինչպես նաև տարբեր պետություններում ապրելու դեպքերում ծնողների և երեխաների իրավունքները:

Այսպես՝ ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն երեխան ունի իր ծնողների, պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ շփվելու իրավունք: Ծնողների

ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչելը կամ նրանց առանձին ապրելը չեն սահմանափակում երեխայի իրավունքները: Ծնողներից առանձին (այդ թվում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք ունի, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

Վերը նշված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը կանխատեսել է երեխայի ծնողից առանձին ապրելու, երեխային ծնողից բաժանելու դեպքերը:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք:..., ինչը բխում է նաև «Երեխայի իրավունքների մասին» 20.11.1959թ. հոչակագրի 6-րդ սկզբունքից՝ համաձայն որի՝ մանկահասակ երեխան չպիտի բաժանվի իր մորից՝ բացի բացառիկ դեպքերից:

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ), իսկ 53-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ:... Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ մասը սահմանում է, որ երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը, ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: (...):

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքում օրենսդիրը նախատեսել է հատուկ նորմ երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին (հոդված 54-րդ): Նշված իրավական նորմի 4-րդ մասը սահմանում է, որ երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով:

Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ հաճախակի հավասարության սկզբունքը դժվար է լինում պահպանել ծնողների՝ առանձին ապրելու դեպքում, քանի որ ամուսնալուծությունից հետո երեխաները մնում են մեկ ծնողի (հիմնականում՝ մոր) մոտ, որի վրա ընկնում է երեխաների խնամքի, դաստիարակության, պատասխանատվության ամբողջ բեռը: Մակայն երեխաների մշտական բնակությունը մեկ ծնողի մոտ չի նշանակում մյուս ծնողին երեխաներից մեկուսացում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ծնողական իրավունքները չպիտի իրականացվեն երեխաների շահերին հակառակ: Հենց երեխայի լավագույն շահը բացահայտելու վերաբերյալ հակասությունների պատճառով ծնողների միջև ծագում են լուրջ վեճեր երեխաների գտնվելու վայրի վերաբերյալ: Չնվազեցնելով երեխայից առանձին ապրող ծնողի իրավունքները, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ծնողները յուրաքանչյուր դեպքում չպիտի ղեկավարվեն իրենց փառասիրությամբ (ամբիցիաներով), այլ պետք է մտածեն երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության, հոգեկան աշխարհի մասին, նրանց հանգիստ մթնոլորտում ապրելու, երկու ծնողի հետ շփվելու պայմաններ

ստեղծելու մասին: Միայն ծնողների կողմից հանգիստ, հանդուրժողական պայմաններ ստեղծելու, իրար հետ երեխայի շահերի վերաբերյալ հարցերով միասնական գործելու դեպքերում երեխան կարող է նորմալ զարգանալ: Երեխայի լավագույն շահերից է բխում ծնողների միջև նորմալ հարաբերությունների հաստատումը (պահպանումը), քանի որ դրանց բացակայությունը երեխայի մոտ լարված, անհանգիստ և անորոշ վիճակ է ստեղծում:

Անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի մասով Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը (որը, ըստ Սահմանադրության, դասվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների շարքին) կարելի է բնութագրել հետևյալ իրավական չափանիշների միջոցով.

1) ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանում է մարդու և քաղաքացու տեղաշարժվելու ազատության ծավալները և սահմանները, ինչն արգելում է պետության ոչ իրավաչափ միջամտությունը,

2) այս իրավունքը բացարձակ չէ, և այն կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և սահմանված նպատակների պահպանմամբ,

3) ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պետք է սահմանված լինի օրենքով,

4) այդ իրավունքի ողջամիտ և համաչափ օրենսդրական կարգավորումը ենթադրում է հանրային և մասնավոր շահերի արդարացի հարաբերակցության ապահովում՝ առանց նվազեցնելու և ոչ իրավաչափ սահմանափակելու մարդու և քաղաքացու անհատական ազատության ծավալները և սահմանները,

5) ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ,

6) այդ իրավունքի սահմանափակման ծավալները և սահմանները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Արցախի Հանրապետությունում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման բոլոր դեպքերը և հիմքերը, ներառյալ մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքը, պետք է նախատեսված լինեն Սահմանադրությամբ, իսկ առավել մանրամասն կարգավորումն իրականացվում է օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով:

ԱՀ-ից դուրս գալու և ԱՀ վերադառնալու սահմանադրական իրավունքների հետ մեկտեղ ազատ տեղաշարժվելու իրավունքը մարդուն հնարավորություն է տալիս սեփական կամքին համապատասխան տեղաշարժվել տարածության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանվել իր նկատմամբ կատարվող ոտնձգություններից:

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը հռչակված է մարդու իրավունքների մասին գրեթե բոլոր հիմնական միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ 1966թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության՝ «Տեղաշարժի ազատությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք: 3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ

սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության ...»:

Հաշվի առնելով նշված կոնվենցիայի պահանջները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. անձի տեղաշարժման ազատությունը «... սահմանափակող ցանկացած միջոց պետք է լինի օրինական, հետապնդի իրավաչափ նպատակ և արդար հավասարակշռություն ապահովի հանրային շահի և անձի մասնավոր իրավունքի միջև» (Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ, 22 մայիսի, 2001թ.):

ԱՀ մուտքը և ԱՀ-ից ելքը կարգավորող հատուկ օրենք մեր պետությունում գոյություն չունի, ուստի երկրից ելքի հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտը Սահմանադրությունն է, իսկ օտարերկրացիների մասով՝ նաև «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» 24.08.2001թ. ընդունված ԼՂՀ օրենքը:

Երկրից ելք գործելու ինստիտուտը կարգավորող նորմերն իր արտացոլումն են ստացել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի (որը կարող է կիրառվել ԱՀ-ում՝ համաձայն ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից 6.06.1992թ. ընդունված որոշման, որը սահմանել է, որ մինչև սեփական սահմանադրության և օրենքների ընդունումը ԼՂՀ տարածքում կիրառվում է ՀՀ գործող օրենսդրությունը) 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև 16 տարեկան երեխային անձնագիր տրամադրվում է երեխայի ծնողներից մեկի կամ այլ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: ...: Նույն օրենքի 6-րդ մասի համաձայն՝ մինչև 16 տարեկան երեխային մյուս ծնողի դիմումի հիման վրա անձնագիր չի տրամադրվում, եթե ծնողը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն նախապես ներկայացնում է անձնագիր տրամադրելու անհամաձայնության վերաբերյալ գրավոր հայտարարություն: Հայտարարությանը կցվում է երեխայի բնակության վայրը որոշելու՝ նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը:

«Անձնագրային գործողությունների կարգի պարզաբանումները հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 15.08.2008թ. հրամանի 12-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ անձնագրային ծառայություններին արգելվում է անչափահաս երեխային անձնագրում օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետների մասին նշում կատարելու համար պահանջել դիմող ծնողի կամ մյուս ծնողի համաձայնությունը: Նույն հրամանի 13-րդ կետի համաձայն՝ 12-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում անձնագրային ծառայությունը պարտավոր է դիմումատուին իրազեկել, որ առանց երկու ծնողների համաձայնության երեխայի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գալու իրավունքը կարող է սահմանափակվել սահմանային մարմնի կողմից:

Վերլուծության ենթարկելով Սահմանադրության, ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի, ստորադաս դատարանների կողմից կիրառված իրավական նորմերը, Գերագույն դատարանը գտնում է, որ, որպես կանոն, օրենսդիրը չի նախատեսել որևէ արգելք մեկ ծնողի (ում մոտ օրինական հիմքերով գտնվում է երեխան) հետ երեխայի այլ երկիր տեղափոխելուն, և արտերկիր մեկնելու, ազատ տեղաշարժվելու իրավունքները սահմանափակելու համար անհրաժեշտ են հիմնավոր, ծանրակշիռ, օբյեկտիվ պատճառներ:

Անդրադառնալով գործով իրական (ռեալ) վեճի բացակայության վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավակիրառման գործընթացը անցնում է հետևյալ փուլերը՝ իրական կյանքի փաստական հանգամանքի և ցանկալի

իրավական հետևանքի պարզաբանում, ենթադրաբար կիրառելի իրավանորմի ճշգրտում, իրավական հետևանքի պարզում և այլն: Դատարանը պետք է հայտնաբերի այն իրավական նորմերը, որոնք պետք է կիրառվեն իրական կյանքի փաստական հանգամանքի նկատմամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (տես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19-ի որոշում, Զ.-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 29392/95, 2009 թվականի մայիսի 10 որոշում):

Գերագույն դատարանն արձանագրում է նաև, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև:

Գերագույն դատարանը փաստում է, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը վեճերը և այլ գործերը լուծում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա: Նույն հոդվածի 3-րդ մասը թույլատրում է վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում կիրառել նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա) կամ նման նորմերի բացակայության դեպքում՝ ելնել իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

Իր սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հայցով դատարան դիմող քաղաքացին պետք է հիմնավորի, որ իր իրավունքները խախտվել են և նա ակնկալում է այդ իրավունքների դատական պաշտպանությունը:

Հայցը նյութական իրավունքի պաշտպանության միջոց է: Հայցը հայտնվում է միայն այն ժամանակ, երբ իրավունքի պաշտպանության համար պահանջվում է դատարանի միջամտությունը, և երբ վիճելի պահանջը ենթակա է քննության որոշակի դատավարական կարգով: Հայցի միջոցով հայցվորը պաշտպանում է իր խախտված իրավունքը:

Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան

պատկերացում կազմել իրենց վարքագծի հետևանքների մասին:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Առաջին աստիճանի դատարանը, անդրադառնալով երեխաներին առանց հայցվորի համաձայնության այլ երկիր տեղափոխելն արգելելու պահանջին, արձանագրել է, որ հայցվորը խնդրել է արգելել պատասխանողին իր երեխաներին տեղափոխել այլ երկիր կամ հատել Հայաստանի Հանրապետության սահմանը՝ հիմք ընդունելով այն, որ իր ունեցած տեղեկություններով պատասխանողը պատրաստվում է երեխաների հետ մեկնել կամ տեղափոխվել արտերկիր: Դատարանը, ղեկավարվելով Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին մասով, փաստել է, որ անչափահասներ Յուլյա Սերգեյ Բարսեղյանը և Միլանա Սերգեյ Բարսեղյանը, որպես ԱՀ քաղաքացիներ, ունեն ազատ տեղաշարժվելու, այդ թվում նաև՝ Արցախի Հանրապետությունից դուրս գալու սահմանադրական իրավունք: Առաջին աստիճանի դատարանը փաստել է նաև, որ հայցվոր Ս.Բարսեղյանը հայցադիմումին կից, ինչպես նաև դատաքննության ընթացքում չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր երեխաների ազատ տեղաշարժի՝ ԱՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի սահմանափակումը:

Վերաքննիչ դատարանն առանց որևէ ապացույցի հետազոտման գտել է, որ ծնողներից մեկի հետ երեխայի արտասահման մեկնելը սահմանափակելու վերաբերյալ դատարան դիմում ներկայացնելը վկայում է մեկնելու հնարավորության վերաբերյալ ծնողների միջև վեճի առկայության մասին, որը ենթակա է լուծման բացառապես դատարանի կողմից, որը պարտավոր է քննարկել որոշակի տևողությամբ կոնկրետ ուղևորությունների հնարավորությունը՝ կոնկրետ պետություններ և ակնկալվող ժամկետներում: Արձանագրելով վերոգրյալը, միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը որևէ ձևով չի պարզել, թե այդ որ պետություն է մտադիր մեկնել պատասխանողը, ինչ նպատակով, որքան ժամանակով: Մակայն գտել է, որ պատասխանողին անհրաժեշտ է արգելել առանց հայցվորի թույլտվության ՀՀ սահմաններից դուրս տանել երեխաներին, այն վերապահումով, որ երեխաների լավագույն շահերից էլնելով, անհրաժեշտ է սահմանել բացառություն, երբ օրյեկտիվ հանգամանքներով պայմանավորված (արտակարգ իրավիճակ, անհետ կորած, անգործունակություն և այլն)՝ հայր ծնողի համաձայնությունը ստանալն անհնարին է:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին աստիճանի դատարանի վճիռը և կայացնելով հայրը բավարարելու մասին որոշում, չի բացահայտել երեխաների լավագույն շահերը և օրենքով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում անհիմն սահմանափակել է պատասխանողի իրավունքները: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն իր որոշման եզրափակիչ մասում բավարարվել է «բացառությամբ այն դեպքերի, երբ օրյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ հայր ծնողի համաձայնությունը ստանալն անհնարին է» նշմամբ, անտեսելով դատական ակտի որոշակիության սկզբունքը: Թե որ մարմինը պետք է գնահատի որոշման մեջ նշված բացառությունը, Վերաքննիչ դատարանը չի կոնկրետացրել:

Այդ կապակցությամբ Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական ակտն արդարադատության ակտ հանդիսանալով, որը տվյալ դեպքում գործի վերջնական լուծում է տվել, պետք է իր եզրափակիչ մասում բովանդակի սպառիչ (հստակ) հետևություններ, որոնք բխում են դատական ակտի պատճառաբանական մասում հաստատված փաստացի հանգամանքներից: Դատական ակտի եզրափակիչ մասում պետք է հստակ ձևակերպվի, թե ինչ է դատարանը որոշել ներկայացված հայցով, ինչ գործողություն պետք է կատարվի, կողմի ինչ իրավունք է ճանաչվել, որպեսզի

դատական ակտի կատարումը չառաջացնի դժվարություններ այն կատարելու ժամանակ:

Բացի այդ, Գերագույն դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջն իրավագուրկ է և Առաջին ատյանի դատարանը հիմնավոր է այն մերժել, քանի որ գործով չի ներկայացվել որևէ ապացույց պատասխանողի կողմից արտերկիր մեկնելու համար կոնկրետ գործողություն կատարելու վերաբերյալ (անձնագրեր ստանալու, տոմսեր գնելու և այլն):

Այսինքն՝ դատարանի քննարկմանը և լուծմանն է ենթակա այն հարցը, թե արդյո՞ք երկրից մեկնելու արգելքի հիմքը հիմնավորված է և բխում է երեխայի լավագույն շահերից, հետևաբար այդ հարցի լուծումը պահանջում է գործի փաստական հանգամանքների հետազոտում, ինչպես նաև գործով կայացված դատական ակտերի ստուգում (հաշվի առնելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները):

Մինևույն ժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պետք է տվյալ դեպքը չնույնացնել դատական պրակտիկայում հանդիպող այն դեպքերի հետ, երբ դատարանի որոշմամբ սահմանափակվում է ծնողի երեխայի հետ այլ երկիր մեկնելու իրավունքը՝ կապված դատարանում ծնողների միջև որևէ վեճի քննության հետ՝ մինչև դատարանի կողմից գործի քննությունը ավարտելը, կամ ծնողի անձի հետ կապված՝ երեխային սպառնացող վտանգով պայմանավորված լինելը: Նշված արգելքը չի կարող դիտվել որպես անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը գտնում է բավարար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 241-րդ հոդվածի հիմքով՝ Վերաքննիչ դատարանի քննարկվող որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Գերագույն դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Նշված դիրքորոշման համար Գերագույն դատարանը հաշվի է առնում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է նույն կոնվենցիայով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումը վտանգ է պարունակում նշված իրավունքի խախտման համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ «1. Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: ... 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան»:

Հայցվորը հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար վճարել է 18.000 (տասնութ հազար) ՀՀ դրամ, իսկ պատասխանողը վճարել է 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի գումար: Քանի որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի վճռին (որով հայցը մերժվել է), ապա հայցվորից հոգուտ պատասխանողի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի վճռին:

2. Հայցվոր Սերգեյ Արթուրի Բարսեղյանից հոգուտ Ելենա Երվանդի Պողոսյանի բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի դիմաց:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Կ. ՂԱՐԱՅԱՆ